

ՀԱՅ Ա. Զ Դ Դ Ն

ԵՒ ԻՒՐ ԱՐ ՄԱՐԴԿԱՌԻԹԻՒԹՆ ԸՐԱԱ ՕԳՈՒՏԱՆԵՐՆ

(Տես Պր. Բ. էջ 97):

ԳԼՈՒԽ Ե

Հիամաւտ դաւրականք 'ի Հայաստան. — Հայ ազգին զօրաւոր ազդեցուրիւնն և քաղաքային վարչութեան եղանակի. — Քրիստոնէութիւնն 'ի Հայո. — Հայոց գործակցութիւնը. — Անոնց սահմանակից զպաց վիճակի. — Ս. Մինրուա և Արակերք Հայոց. — Հինգերորդ կամ ուսի դայ հայերէն դպրութեան. — Հայոց առ ազդու մարդկան մատուցած նպաստքը, այն դարուն և այսպայից մէջ:

Մինչև յարդ սեսնուեցաւթէ Հայաստան, կամ լաւ ևս բաելով, Հայք տուին նախնական շարժմունս գաղթականութեան, Հայք եղան առաջին հինաւուրց ժողովուրդք, որոնք զառաջինն հարաւէն զէպ 'ի հիւսիսակիողմանս ընթանալով, թաղցին մի առ մի իրենց նահապեանները Հայիկն սկսեալ, ոչ միայն Հայաստանի, այլ Աղուանից, Վլաց, Ակիւթացւոց, Ալանաց, Սակաց կամ Շակաց, Տայոց, Ռւաէացւոց, Գուգարաց, Սարումաղաց կամ Սարմատացոց, Մազքթաց, Մոսքաց և Կովկասու ձիւնապան լերանց, անտառուաց և անապատներու մէջ. և զանոնք մարդաբնակ ընելով, վիրածին յազգս և 'ի ժողովուրդս: Հայք 'ի հիւսիսի, նախ քան զամենայն հասան 'ի վերջին ծայր երկրագործական և անդէորդա-

1 Ամսոնք 1500ին նախ քան գլուխուու էկան 'ի Հայաստան իրենց պատուական իշխանին Քանակիդասի առաջնորդութեամբն, ըստ Յովի: Աթեւ Ս. Խորենացւոյ: Վասն զի Յեռու ափեց Աբ. բանանու, Փիւնիկեցիք մասամբ մը փախան 'ի Սիրոն. Խսկ այլ անցն ՅԱմբեկէ, ըստ Հովի: Գոյն արձանագրքին Դանձերի, զոր 'ի մէջ բերեն Խորենացի (Ա. Գլ. Ժիթ, և Պորկոպիոն յի գիրս Վանդալաց): Սակայն Քանանացւոց գայուսան 'ի Հայոց աւելի լաւ կը միաբանի Աղեքսանդր Բազմավիսի աւանդագին. թէ, Հայք 20 դար մէր

կան արուեստին և տարածեցին զմշակութիւնն 'ի սահմանա'ից աշխարհս ամենայն: Հոյ աղդն անդուստ 'ի վերուստ բացաւ վաճառականութեան գուներն ընդ ծով և լնդ ցամաք, և լեցուց դրացի և հեռաւոր ազգաց շահաւատններն իւր ամենազդի և կարենոր արդիւնաբերութեամիքը, Նա միացոյց զհարաւ ընդ հիւսիսի, և զիլրենը ընդ Արևմտից իւր կեղրոնական դրիւկն և ճարպկութեամբը:

Այժմ զինչ այլ ևս կարող է ակնկալ լիւ 'ի նմանէ մարդկութիւնը, Դեռ շատ և շատ բանի կ'ակնկալէ, և երբեք չի պիտի վրիսի իւր ակնկալութիւններէն: Այսուհետե այո, կը տեսնենք յընթացս պատմութեան, որ Հայաստան զթած մօր մը պէս՝ բանալով իւր ընդարձոկածաւալ և միշտ արդաւանդահող ծոցն, առ ինքն կը հրաւիրէ, ոչ միայն զազդս և զագինս, զօրս յօտարութեան ծնաւ, այլ և զժողովուրդս բոլորովին օտարս և բացակայս յինքնէ:

Ահաւասիկ հոն կը դիմեն ամենուստ ոչ միայն ընկճնեալ և տարաբախս ժողովուրդք, այլ նոյն իսկ իշխանք և պատուականագոյն տոհմք Քանանացւոց¹ կամ Փիւնիկեցւոց, Ասորեստանեացց²:

Թուականէն յառաջ արշաւելով 'ի Փիւնիկէ' յաղթեցին անսնց և գերի վարեցին զանոնք:

2 Սենեկէրիմայ որդւոց՝ բազմութեամբ 'ի լերին Հայոց տապահնին, միայն Խորենացի չե որ կը պատէ, այլ նշյն իսկ 'ի Թագաւորութեան (Ժիթ, 37) և Խայի (Ա. 38): Բայց անժխտակի հաւատուիք են իւր այն յեղի աւանդութեանիքը, որ կենդանի մասցեր էին միջեց Պատրիարքը, որ կենդանի մասցեր էին միջեց Պատրիարքին: և Խուզանդ մէջ կը բերէ իւր Հայոց պատմութեանը մէջ:

Հրեկց¹, Մարտաց² և Պարսից, Հնդկաց³,
Բուլղարաց⁴ կամ ալաւոնական ցեղից,
Ալանաց⁵, կարեանց⁶, բասզաց⁷, ձե-
նաց⁸ և Քրդաց⁹ կամ Քաղդէացւոց :

Եթքա առհասարակ եկան հայ հողին
և հայութեան բարունակին վրոյ պա-

1 Հրեկց եկողաց մէջ նշանաւոր էր Շամբատ,
որ ըստ մաթիսական աւուակութեան, Նարու-
գոգոնոսոր զնկեցց գերի վրած ժամանակ,
Հրաշէի (Ուրսա ըստ բնեագրաց) Արարատաց
թագաւորին խնդրանոցն իրեներով եկա, ՚ի
Հայաստան : Սակայն Տիգրանայ Ռշաքանցաց
ժամանակին եղաւ Հրեկց արամածիր, գաղթա-
կանութիւնը, զոր պատմն Մ. Խորենացի (Բ.
գլ. ժԴ. ժԶ և ԿԵ), Բուղանդ (Գ. Դպր. Էջ
85) և Սարարուն (Գիրք ԺԱ. Էջ 804) :

2 Նշանաւորերեն մին է այլ գաղթականու-
թիւնս, որ ՏԶ9ին Կ'յոյաց մեր թուականէն յա-
ռաջ որոցնեան զայն կազմովն, ոչ միայն է
Աժդահակից առաջին կինն Անոյ, հաղերձ
մեծամեծ պալատականօք և մեծամեծ սպասաւո-
րոց այլ Տիգրանունքն, ըստ մարդիսաեան ա-
ւանդութեան, որոնց թիւն 1000ի կը հասնէր:
Այս մարական գաղթականութիւնն սողուու-
թիւնն, որքափ որ Աժդահակից կամ Մարտաց
թագաւորութեան անկման հետ կապակցեալ
է, զոր Հերուսալիմ, Քանենովուն և Մ. Խորենացի
իրարուն անհամաձայն կը պատմեն, բայց վա-
ղապես երգերն ՚ի բերան Հայ ժողովուոց և այլ
հաւասարէ աներկայիւթ կ'ընեն : Որովհետեւ
Տամբատ, Պակեռոյս, Թափոյյիք, Վրդուանիք,
Խորս, Ջուզայ և Խօսկունիք, զոր Մարտրաս
մարական գաղթականութեան աւելեց կը հա-
մարի, նոյնպէս էն Ղեռնդ պատմի ժամանակ :

3 Վազարշակայ ժամանակ (131-120) կ'ըսէ
Զենոր Գլակ, Թուզլ Լի, Դեմետր և Գիսանէ
Հնդկաց հիւսններն, Ինչոյն Դինասեայ թագա-
ւորուն գէմ գուաւանութեան մը նորհնլով էրը
չի արտօնցան, հազիւ հրան իրենք զիրենք
ձգել ՚ի Հայու առ Վազարշակ, որ Տարոնոյ գո-
ւառաւ անոնց ընկառութեան աեղ առուաւ : Հնդիկ
իշխանական ՚ի Հայաստան գաղթեն և Արշակունի
թագաւորին զնոնիք ընդունելուն շնոյն էնոյն հոկ
Վազարշակից կամ Արշակայ մեծի Հնդկաց հետ
ունեցած ազգականութեան : Որովհետեւ ունանք
՚ի պատմագրան Սէր Մարգենի հետ երեք պա-
յացառութեան կը բաժնէն զԱրշակունին, այս
ինքն Արշակունիք Հնդկան, Արշակունիք Պար-
սից, և Արշակունիք Հայոց :

Սակայն յայտնի է թէ մեր թուականին Դ
գարուն բազմաթիւ էնն այս գաղթականու-
թեան բնակիչներն ՚ի Հայու, ըստ Զենոր Գլակայ,
միայն քրմաց և անոնց հետ մարտնուցաց թիւն
ընդդէմ հայոց էր 6946, և Անորդի մակդիրը
գեռ կը կրեն վրանին : Հաւասարու համար
թէ անոնց հետ կային ՚ի Հայուն և էկ ՚ի Պար-
սից, բաւական է մէջ բերել Լուսաւորուայ առ
Ղենուան գրած Ա. Խորըլզն, յորում չըսէ,
թէ օ ջոր Խնահնեան հոյնն տեղեւոյն Հնդիկ և
Պարսիկ, յոր պահճային յոյժ բնակիչը եր-
կրին » :

տուաստելու համար : Անտի կ'սղէին
ընդունելի իրենց կենսական և բարոյա-
կան անուննն և հաստատութիւնը՝ զեր-
ծեալքն ՚ի վտանդաց : Աւստի հարկ էր
որ յաւերժմանար անոնց յաղորդութիւ-
նը : Աստ արդարեւ տեսնուեցաւ և պի-
նը :

4 Ասոնք Արշակայ Ա. ժամանակ էկան ՚ի Հայու,
ըստ Վայուութեան Մ. Խորենացոյ (Բ. Գլ. Ձ. Թ.)
մէծ յեպսիսութեան մ' առօժիւ, որ յայտնի
չէ : և բնակեցան նախ ՚ի ներբոյ Կոյոյ, բայց
յետոյ փոխագրեցան ՚ի Վանանդ : Յովհան Կա-
թուղիկոս ընդ հակառակն հրեայ կը համարի
զննոնք, որոնք ՚ի Բուղարիս բնակեին իսկը-
ան :

5 Այս գաղթականութիւնն Արտաշէս իտ ժա-
մանակն է ըստ ոտհմոյին մատենագրաց և կրկին
ննդագմատ : Առաջնին գերեվորութեամբ է քան թէ
կամաւոր գաղթականութեամբ, եթէ իրաւացնէ
ինչպէս կը ծանուցանէ Խորենացի (Բ. Գլ. ԾԲ)՝
ապստամբութեան պտտամառաւ Միքատ սպարա-
պետն Հայոց բերան անժիւ բաղմութեամբ ՚ի
Հայաստան : Սակայն հաւասական է թէ համա-
սոր կաղած ըլլոյ Ալանաց գալրուան, իրենցը ըլլո-
ռաւորին ձեռքէն ազատեալ համար, զոր կը
յիշէ Խորենացին : Երկրորդ գաղթականութիւնը
թէպէտ և այնպիս բազմաթիւ չէ, բայց պա-
տուաւուրութեամբ մեծամեծաց կը գերազանց
պատմինը, որովհետեւ մերձաւոր ազգականք էին
Ամֆինիկ ամինք :

6 Եղինակն Արտաշէսի ժամանակ և ապստամ-
բութեան առմեծի բերուած կը համարի զանոնք
՚ի Հայու Ամրատայ ձեռքով Խորենացի (Բ. Գլ.
ԾԲ) : Նշանաւոր է այս գաղթականութիւնն
իւր բաղմութեամբ պատմառաւ : որոնց թիւն,
կ'ըսէ պատմիք, մէծ էր քան զիկեաս յԱլանաց՝
մանաւանդ որ իրենց հետ եր նաև Պարդմանու
թագաւորն : Անոնց ընակութեան աեցերն եղան
Տմորիք և Կորուուք :

7 Այս գաղթականութեան վրայ մանաւոր
տեղիկութիւն ըսւնիք : Խորենացի (Բ. Գլ. ԾԲ)՝
Առուզենից առհմին վրայ խօսկոլով հարևանցի
մերաշակութիւն կ'ըսէ ՚ի ժամանակն Խոր-
ովու հօրոն Տրգատայ խնամացաւ ընդ ուժմա-
քաջի բասզաց եկեալ հատուածի (այսինքն է ՚ի
գաղթականութիւնն էկելց ՚ի Բասզաց) :

8 Ցենաց առաջին գաղթականութեան գա-
լուան ՚ի Հայաստան, Տրգատայ Մեծի ժամա-
նակն էր հոչուակի, Մամբուն իշխանի պառանու-
թիւններէ : Խնկ երկրորդ գաղթականութիւնն
յետոյ է ժամանակաւ և անուղղակի կերպով-
այսինքն նախ ՚ի Վաստան բնակելով Ուրսէ-
լեանը հոչուական : բայց վերըն անցնելով ՚ի
Հայոց Սիսեանց գաւաւոր մակեցան :

9 Այս գաղթականութիւնն 1181 կամ
1191^թ Բագրատունեաց ժամանակ եկաւ ՚ի
Հայու, ընդունելով զբրիստանէութիւն : Եթուոյ
շահանական շրագարաց քաջագործութեամբը
ընդդէմ Թթաբուց շատ պատուացան : Ուսոնց բնա-
կութեան աեցերն էին Խորոսին և Տայքիր : բայց
կիրակոս բաբերական Խորոսին եկած կը համարի
զննոնք :

տի տեսնուի հայ ազգի քաղաքական վտրութեան եղանակին հետ՝ միանգամայն անոր զօրաւոր աղդեցութիւնն այլասեռ տարերաց վրայ ։ Նա չի մնասեր անոնց իւկը և չեղծաներ զանոնք նիւթապէս ։ և ոչ ալ ինքը կը վասսի անսնցմէ կամ կը կորսնցընէ իւր բարոյական ոյժն և ազգային մեծամասնութիւնը ։ Այլ քաղաքականապէս ներգործելով ՚ի նոսա՝ կը փոխէ զանոնք առ սակաւ սակաւ, և իւր հայ բնոյն հետ կը իւրացընէ ։

Յետ այսպիսի ընդլատանման քաղաքատարը ցեղից ՚ի մի զանգուած հայոթեան, գեռ կ'աճի հայ ազգին հինաւուրց բարունակն, ոչ միայն ցժամանակ հայկազունի կուսակալացն Արտաշատի (180—190), Զարիադրիսայ և Արշակունուցն Տիգրանայ թ, որոնց տիրապետութեան փառաւորութիւնը գեղցիկ կը նկարագրեն Տակիտոս, Կիկրոն, Ամիանոս և Ստրաբոն, այլ մինչև ցվերին պայազատս Պարթեն Արշակունի թագաւորաց ցվառամշապուհ կը ձգուի ։

Տեսնինք այսուհետե հայ քաղաքագիտութեան բռնած ոճն, որով կարաց առանց կորսնցընելու իւր ոյժն և էութիւնն այն այլատարը աղդաց խառնակութեանը մէջ, կազմել մի ազդ և ժողովուրդ մի, երբ ոչ Միասուտածութիւնն և ոչ ալ քրիստոնէական կրօնից նման միաւորիչ միջոց մը կար ։ Այլ քաղմասուտածութեան և առանձին աղդաց ծէսեր և պաշտամունք միայն կը տեսնուէին, որոնցմով կը խորչէին իրարմէ աղդք և ազինք, և կը կազմէին ուրացն աղդութիւններ ։

Մարիբաս՝ կամ քաղցէական աւանդութիւնը կը վկայէ Արամայ համար, թէ՝ տիրելով կապագովկիոյ և Պոնտոսի ժողովրդոց, « Հրաման տայ ընակշաց աշխարհին, ուսանել զիսօս և զիեցու հայկական » ։

Ստրաբոնէն կ'իմանանք թէ այս քաղաքագիտութիւնս կը տեսէր ՚ի Հայսնակ 8 դար յետոյ քան զԱրամ։ Յոյն

1 Մ. Խորենացի Ա. ուշ. ԺԴ.՝

մատենագիրն այսպէս կը գրէ Արտաշամի կոմ՝ Արտաքիսասայ կուսակալի մասին և Զարիադրիսայ կամ Զարեհի և Տիգրանայ թ վրայ, համուձայն մարիբասեան աւանդութեանն, թէ « Ասոնք, այսինքն Արտաշամ և Զարիադրիս, մեծցոցին զշայաստան, առնելով ինչ իս սահմանակից աղգաց ։ ի Մարաց տոին զիսօսիանէ և զիանիտիս և զբանորսափիտան ։ յիրերիացւոց՝ զիեռնակողմանն Պարիադրեայ, զիորդինի և զիմգարինի յայնկոյս կուր գետոյն ։ ՚ի Խալիւրայց և ՚ի Մոսքիկեանց զիարինիդիս և զիսերքսինի ։ ՚ի Կատաւունաց զիայց՝ զԱկիկիսինի և Անտիտաւրոսի շրջակայքը ։ յԱսուրոց՝ զՄարովիդիտիս ։ իսկ Տիգրան, նինուէի և Արբելայ շրջակայ Երկիրներն ալ աւելցուց անոնց վրայ ։ Հարկատու ըրաւ զՄորոբադենացին և զԴորդիւացին ։ զի մասն Միջագետաց, զՄոսորիս և զՓիւնիկաստան, և Յունաստանի մի մասն Անցաւ Եփրատ գետն, և քաղաքներ ևս կառոյց կ'ըսէ, յորոց մին է Տիգրանակերտ, զորս Հելլենացւոց 12 քաղաքներէն գերած բնակչքը ծաղկեցուց ։ իսկ յետ այսորիկ զինչ կը յաւելը Ստրաբոն և Արպէս զի ամենեցուն սոցա լինել համարարաս և համայնքուս ։ Տարակոյս չկայ թէ հայերէն լեզուն կ'ակնորկին հեղինակին վերջի խօսքերը ։ վասն զի Հայք ըլլալով տիրապետող աղդը, բնականապէս անոնց լեզուն ալ պէտք էր որ ըլլար տիրող և հասարակաց լեզուն ։

Այսպէս ուրեմն ըստ իմաստուն թագաւորաց մերոց՝ աղդութիւնը ամեն բանէն աւելի լեզուին վրայ կայացած էր ։ և լեզուն միայն դիտէ կանցնել կամ կործանել զնա ։ և նախնիք մեր ասկէ աւելի զօրաւոր միջոց չէին կը ընար գործածել հեթանոս աշխարհի մէջ ։ Եւ որովհետու միշտ գործադրեցին, ինչպէս տեսնեցաւ, ուրեմն շատ աւելի հանճարեղ և իմաստուն եղած պիտի ըլլայ քաղաքադիտութիւն միապետացն Հայաստանեայց, կան բռնա-

2 Գիրք ԺԱ.

որական : Զէ և չէ պարտ իրրի բռնա-
ւորական գործ՝ դատել այս պատճա-
ռաւ վերդիշեալ իշխանաց բռնած ոնք՝
վասն զի ինչպէս արկելեան՝ պյսպէս
ալ արեմտեան շատ աշխարհակալք
նյոյնպէս վարուեցան : Խրացելացիք՝ ե-
ղիպտացւոց ձեռքին տակ նուածուած
ժամանակ, անոնց լեզուով և նշանա-
զրերով ստիպեցան վարուիլ . և Ասո-
րեատանեայց գերութեան՝ ժամանակ
ալ քաղդէւտրէնով . որուն հաւասարի
են դանիելի, Թալմուտի, Միջնայի և
այլոց գրեթրը : Այսպիսի էր նաև Փի-
լիպպոսի և Մեծին Աղեքսանդրի նպա-
տակն, կ'ըսեն բաղրամի, այսինքն, բո-
լոր Ասիոյ ազգերը ձուլել 'ի մի ժողո-
վուրդ, յունարէն զպրութեամբ : Եւ
գործադրութիւնն իսկ իրօք կատարուե-
ցաւ Ս. Հերոնիմոն կը վկայէ թէ Ա-
սիոյ ժողովուրդները, բաց 'ի Գաղատա-
ցւոց, ամենքն ալ յունարէն կը խօսէին :
Եւ այսմ առհաւատչեայ են դրամի աղ-
դացն, որոնց վրայ բաց 'ի յոյն վեր-
տառութենէ, յունասէր ևս կը կուեն
իրենք զիերենք ժողովուրդք: Նոյն կեր-
պով վարուեցան զարձեալ այն ազգե-
րը զորս ստիպեցին Արամ և Արտաշէս
հայերէն խօսիլ, որոնք ոչ միայն համե-
մատութեամբ բարբարոս էին և առանց
դպրութեան, այլ նոյն իսկ նախնական
ժամանակաց մէջ՝ հայկազունի նահա-
պետաց և 'ի զաղթականութեանց նո-
ցա սերեալ ժողովուրդք էին, ըստ վր-
կայութեանն արտաքին և տահմային
մատենագրաց :

Հսյութեան բարոնակին՝ այնքան ազլ
դաց զօրութեան և բարեմասնութեանց
հետ՝ ընդունելով յինքեան նաև իւր ի-
մաստոն և քաղաքագէտ իշխանաց
խնամքն, չուշացաւ այն եկամնուտ ազլ-
դաց՝ նոյնաթիւ նախարարութեանց
գեղցիկ և օգտամասաց շառաւիդներ
, ի վեր արձակել իւր բնոյն դրայ, իւ-

1 Σεροπαποιον Π. πλ. 207: Φιλέα Φ. πλ. 11 Λ.
τ. πλ. 64: Αιγαίου πρώτη βιβλιογράφη, Ζω. Β. Καλαθήτ.
Στέλλα. β. 13: Βασιλεύοντος φιλέα Θ. πλ. 96:
Αιωνιοτάτην, Αιωνικραυδόν Βασιλ. Β. Ιωνοκράνων
χειρα. Π. πλ. δβη. - β. πλ. Β. Φιλέανης καὶ Φιλέ-
ανης:

ասոնկի ին գնդունիք, Արծրունիք, Բաղ, բատունիք, Մամիկոնեանք, Սիւնիք. Գնունիք, Աստանիկը, Ամառունիք, Առաւելիանք, Կամարականք, և այլք, որոնց թիւն ըստ Սահփանոսի Բուպեցիան 400ի կը հասնէր. իսկ ըստ Փաւասոսի բուզանդացւոյ 900ի:

Եւ այս նախարարութեանց շատերը,
ժամանակի անցնելէն ետքը քրիստո-
նէական սուրբ կրօնին ընդունելով՝
խաչանիշ ադամանդն ևս պիտի փայլե-
ցընէին իրենց թագաւորական թաղին
վրայ, Մինչդեռ անոնց ազգակիցը, յո-
րոց գաղթական եկան, կամ իսպառ
ջնջուեցան յերկրէ, բարբարոսական
հարուածոց զոհ ըլլալով, և կամ մինչեւ
զվերջ թագուած մեացին հեթանոսա-
կան խուարի և յետամնացութեան
մէջ, Դեռ Միջն Տիգրանայ ժամանակի
փառաւորութեան յիշատակն և անոր
պայազատից բաղդն՝ բոլորովին չէին
անհետացած, երբ քրիստոնէութիւնն
առաջին անգամ մոռաւ ՚ի Հայաստան,
Թագէոս և բարիթողիմէոս առաքելոց
քարոզութեամբ:

Եւսերիոս իւր եկեղեցական պատ-
մութեան մէջ՝ Հայոց ՚ի քրիստոնէու-
թիւն դառնալուն բնաւ յիշատակու-
թիւն շըներ, ոչ առաքելց և ոչ Յ.
Լուսաւորչի ձեռքով. Յակայն տահմային
պատմուգրութիւնն կ'ապացուցանէ թէ
Արքար թագաւորին ժամանակ և յե-
գեսփոյ անցու ՚ի Հայաստան։ Եւսե-
րիոսի լուութիւնն այսպիսի կարեոր
գէպքի մը վրայ, լու ևս կը հաստատէ
ընդ Խորենացւոյ, թէ Եղեսիա գեռ
Հայոց թագաւորութեան մի մասն կամ
Աղձնեաց բգեշխութեան աթոռը կը
համարուէր այն ժամանակ և զԱրքար
իրրե անոր պայզապառզ և Հայոց թա-
գաւոր կը ճանչնային Ծոյնք և Ասորիք:
Ուստի և Եղեսացւոց դարձովն՝ Եւսե-
րիոս Հայաստանի դարձն ևս ՚ի քրիս-

2. Որոնք որ Աստմանիի հետ զԱբրար Հայոց
Թագավորը չեն Տանջնար և ոչ որդի Արշամաց
կամ Ուշամայ. Դիմուելիոս անուամբ ասորի պատ
րիացիք մը փայտութեան քառ վատահացած էն,
որ թարգուս մը Եւեկանցոց Անգոր կուսուող
Թագավորաց ցանի մը ցինեց, որոնց առաջինն

տոնէութիւն ծանուցած կը համարի թերևս : Սակայն մեզի աւելի հաւանական կ'երեի թէ եւսերիոս պատմած ըլլոյ Հայաստանի դարձը, բայց կամ' ի ձեռն Մերուժանայ Արծրունուոյ և կամ ուրիշ արկածով մը անհետացած էր 'ի միջոյ այն մար :

Արչափ որ հոյ ազգն 'ի բնէ կրօնասէր էր, ասկայն քիչ ժամանակ տեսելով առարկելական քարողութեան, այսինքն է 39էն ց48, Քրիստոնէութիւնն չէր կրցած խոր արմատանալ ժողովը դեան ամեն դասուն մէջ: Վասն զի իզատ կամ Սանատրուկ քեռորդին Արդարու՝ յաջորդելով նմա 'ի Հայս, երբ անոր որդին Անանէ կ'իշխէր յեղեսիտ,

136 նախ քան զի՞րիստոս սկսաւ թագաւորել, և վրջինը՝ մեր թուականին 217ին: Գիտն կասիոս (Գիրք Խ.) Աբոր զմէն կը յիշէ եղեսացի կրտսուն ժամանակակց, զոր Պղծոս Մալու կը կոչէ, և Սէբաստոս Հառուս և Պլւտառուս, այսով ինչ անուամբ յիշէն:

Սակայն նեթագրելով թէ իրց Եդեսից Արդարներու այն հարստութիւնն 136ին սկսած ըլլար, ինչ գիպուտածու, ինչ ազգէ էր առաջն թագաւորաց, ինչպէս յարդրան Պրոքեն Արցականի թագաւորաց. և ինչ էքրով գործածեալ տեղի տուաւ անոնց: Այս հարցերն ամէ մէկ գործարութեան և անստուգութեան խոռնակութիւնը են, զորկ 'ի պատմական լուսու, մանաւագդ թէ հակառակ կը զինք առարտին և տոյնային պատմական աւանդութեան: Վասն զի նախ մինչ ց180 կը տեէր Աւելիակացւոց թագաւորութիւնը: Բ. (137) Աստիբոսի եօթներորդ հետ վերուեցաւ Ավելիանց թագաւորութիւնը նարոր: Գիտուածական Արմատարքութիւնը անուամատ անուամատ էր կը զինք առարտին և տոյնային պատմական աւանդութեան: Վասն զարգաց շատերն ընդ Արարոտի (Գի. Փ. Ա. և ընդ Դիոն Կաստոսի (Ա. 7) և Յովելապոսի Նախն. Պատմ: (1, 3) կ'ընէ, թէ 150-180 Մթին եղաւ արբանախօս Արշակունի թագաւորացն և տեղի գանձուց թագաւորին, որը Եդեսի և յետոյ Լուկուլլոս պատմ., բայց Միջնն Տիգրան յետգարձուց, և զլուանաստան ևս Ասորուուրի կողմէրն անոր քրայ աւելցուց: Աւրեմն եթէ 180էն ց150, կ'ուզեմ ըստ, յետ ակնան Սերեգի, Միջադեռաց, Անորուց այն մասերն հանդերձ Եդեսիաց հայ թագաւորութիւնը իշխանութեան կամ հարստութեանը կը վերաբերին: Ասորի հարդարաց այս արքան յաջորդած էր կոչէ անոնց և Հայոց Պարմիք, Պարմիք՝ Ուստից կը կամ Եդեսաւ կամ արքեաշխն որոնց հարաւայինն էր բգեաշխն Ազնենաց՝ Շարաշն: Արդարու, Վարշակայ ազգակից այս բգեշխն կամ նախարէի Երերուն կուսակառութիւնն է որ Եօդրացանին անուամբ տեւեց մինչ ցԱրքար Մէծն և ցամն 217, ինչպէս անոր պայազառող կուսակալէքրն ալ էրն այն ցեղնն Աւագ-արք կամ Արգարքն: Անշառն զայս կ'ախարկեն Գրիգոր Բարեբրէյոս ասորի պատմագրին հօսքերը, թէ Պարմիք են Պարսիք, Պարմիք՝ Ուստից կը կամ Եդեսաւ շիք, Դարձեալ Պարմիք են Հայք: Նոյնակեն Ստեֆանոս Եւստիոս ասորի մատուադիրն մի և նոյն ցեղէ համարկելզ ցԱրքանացին կամ զԼուշային և զԼայս վԱ. Լուսաւորինն մեր մաքեալ կը կոչէ անոնց և Հայոց 'ի վկայարանութեան իւրաքանչիւն Ասորի զԾրդաւագականին անուշաւ պայ պատճառաւ համարի 'ի ծննդոց Արգարքու:

Իստ թագամետան պատմաց, Ասորուց թագաւորութեան պայազառութիւնն ոչ տոյնային և ոչ ալ ժամանական էր, այլ ընտրական: Թոյն թէ տեած ըլլար մինչ մեր թուականին Գր գարը: Վասն զի Արտաշեսի, Միջնն Տիգրանայ և Արտաւացցյ թագաւորութիւնն այն միջցին յԱսորիս այնչափ ծանօթ է, նաև արեմանեան

ջանացին արմատակիլ ընել վերսալին աշխարհէս զըրիստոսնէութիւնն: Առաջ ջին զոհն եղաւ Ս. Սանդուխտ, գուստը թագաւորին Հայոց: Շուտով մուտ դաւար քրիստոնէութիւնն 'ի Հայաստան և շուտով հալածական ելու անափի, բայց ոչ առանց արդեանց: Անոր բարյական զօրութեանըը, զոր առանց իմանալու ընդունած էր Հայաստան, երեցան Միհծն Խոսրովիներ, Տրդատներ, Արտաշէս երկրորդներ և Արշակներ. և անով գողացցյ Պարսից պետութիւնն յաւուրս Արտաշրի և Շապհչյ:

Հարկ էր քրիստոնէութեան վերադարձանալաւ ՚ի Հայս, որովհետեւ անտի պիտի կարենար:

Ապատմագրաց, մինչև անոնց մասին աարակոյս հանելին աւելորդ է: Սակայն եթէ գառնանք առ Ղերուբրան և առ Մ. Խորենացիք, ոչ միայն բոլոր այս գժուարարութիւնը ըստ վերաբեր անուան այլ և ՚ի իմուն կամ կամ վերոյիշեալ Արգարինը ցանկն և անոնց թուրացունուուն գեղեցիկ կերպով կը համաձային Արշակունի թագաւորաց հարստութեան հետ էր գոտ ժամանակագրականին:

Մ. Խորենացիք Ղերուբրայէն առնելով, որուն գրուածքն էր 'ի ՚ի իմուն նեդեսից, կըսէ (Բ. գլ. Ը) թէ Վաղարշակ իւր թագաւորութեան յօրինուածութեան ժամանական կամ պատմական անուամբ անուամբ մի և նոյն գրոց (Գլ. Ը) կ'ըսէ, թէ կարգեաց չըրս սահմանակալ կամ կամ բգեաշխն որոնց հարաւայինն էր բգեաշխն Ազնենաց՝ Շարաշն: Արդարու, Վարշակայ ազգակից այս բգեշխն կամ նախարէի Երերուն կուսակառութիւնն է որ Եօդրացանին անուամբ տեւեց մինչ ցԱրքար Մէծն և ցամն 217, ինչպէս անոր պայազառող կուսակալէքրն ալ էրն այն ցեղնն Աւագ-արք կամ Արգարքն: Անշառն զայս կ'ախարկեն Գրիգոր Բարեբրէյոս ասորի պատմագրին հօսքերը, թէ Պարմիք են Պարսիք, Պարմիք՝ Ուստից կը կամ Եդեսաւ շիք, Դարձեալ Պարմիք են Հայք: Նոյնակեն Ստեֆանոս Եւստիոս ասորի մատուադիրն մի և նոյն ցեղէ համարկելզ ցԱրքանացին կամ զԼուշային և զԼայս վԱ. Լուսաւորինն մեր մաքեալ կը կոչէ անոնց և Հայոց 'ի վկայարանութեան իւրաքանչիւն Ասորի զԾրդաւագականին անուշաւ պայ պատճառաւ համարի 'ի ծննդոց Արգարքու:

Իստ թագամետան պատմաց, Ասորուց թագաւորութիւնն ոչ տոյնային և ոչ ալ ժամանական էր, այլ ընտրական: Թոյն թէ տեած ըլլար մինչ մեր թուականին Գր գարը: Վասն զի Արտաշեսի, Միջնն Տիգրանայ և Արտաւացցյ թագաւորութիւնն այն միջցին յԱսորիս այնչափ ծանօթ է, նաև արեմանեան

սպիրն ազինս : Բայց առողքելաշնորհ և սրանչերագործ մէկու մը պէտք կար, վերսուին ցուցրնելու համար անոր գերապանծութիւնն այն ազդին մէջ, յորմէ նուխնարար հալածուեցաւ : Եւ այս մէկը, որ զհազրու կը գերազանցէր, էր լուսաւորիչն Հայոց, Ս. Գրիգոր պարթեն : Սա խաւարային վիրապէն արեգական պէտ ծագելով, զոյդ ընդ Արքոց Հոփիսիմեանց նոր լոյս և յառաջխաղացութիւնն կ'աւետէ բոլոր հիւսիսական ժողովրդոց :

Դարս այս է իրաւցընէ գար ամենամեծ յեղափոխութեան կրօնից և քաղաքականութեան յազդիս և 'ի պատմութեան : Թէպէտ և թագաւորն և պատուական նախարարը Ս. Գրիգորի ձեռքով ընդունած էին զքրիստոնէութիւնն, սակայն հեթանոսութիւնն ևս ունենալով գեռ իրեն բազմաթիւ արքանեակները, կ'ուզէ իւր վերջինն ճիզզ թափել :

Իսկ մենք թողով այն գարուն և յեղափոխութեան մանրամասն նկարագիրը Ազաթանդեղոսի և Խորենացւոյ, միայն էական կէտերու յիշատակութեամբը գոհ ըլլանք : Աստիք են, Աֆրամական կամ հեթանոսութեան անհամար արրանեկաց և քրիստոնեայ Հայաստանի մէջ՝ ծագեցան երկպառակութիւնք և բիւրաւոր մարդկանց կորուստ : Բ. Կորուստ անթիւ և անդին յիշատակարանաց հիթանոս Հայաստանի : Գ. Այնուհետև սկսաւ նուազիլ յազդիս արիական ազգաց քաղսքական ազգեցութիւնն և յունականը զարգացաւ : Դ. Ի Քրիստոնէութեան ներշնչեալ՝ մարդկասցին ընկերութեան օգոտակար արուեստի և գիտութիւնք սկըսանչ հակայափայլ յառաջանալ :

• Բարոյականի նոր զօրութեամբ բարգաւաճելով հինաւուրցն Հայաստան, շուտով մոռացաւ իւր այն ժամանակի հանդիպած նիւթական աղէտքը. և մինչ գեռ անդին դրացի ազգեր, զոր նախնական ժամանակաց մէջ հայկազունք դաղթականներով բազմացուցած՝ դեռ

իւր խնամնցը ներքեւ կը մնուցանէր, զորկ էին 'ի քրիստոնէական յառաջազիմութենէ, և շարունակ հեթանոսական խմգամակութեանց զոհ : Վասն զի Առաքելոյ ուրաք ուրք չի կոմեցին բնուանդ, և այս առաքելութիւնս Հայստանի վերապահուած էր :

Սոքա ամենիքեան Հայաստանէն միայն կարող էին ամնկալի գարձեալ այնպիսի հոգենոր և մասաւորական վերանորոգութիւնն և մարդկային ազգին պարգևած վերջնական բարիքը, ինչ պէտ 'ի հեթանոսութեան՝ ընդունեցան զամենայն նիւթական բարիքս : Հայաստան կը գարձենէ բոլոր իւր ուշագրութիւնն այն հիւսիսարքնակ ազգաց վրայ, և միայն Հայաստանն է, կ'ըսէ պատմութիւնը, Վասն զի Պարսիկը և Յոյնք յոյժ բացական էին աշխարհաւ, և հաւածանաց մէջ :

Դարձենենք ուրեմն մենք ալ մեր ուշագրութիւնն Հայոց այդ վիեմական ձեռնուութեանը վրայ :

Թէպէտ և հայ Հերոդոտոսը¹ կը ճանուցանէ թէ Հոփիսիմեանց խմբէն՝ սրբուհի նունէ անցնելով Հայաստանէն 'ի վրաստան, մեծ հրաշագործութեամբ մը գարձուցած էր արդէն զՄիհրանի թագաւոր նոցա 'ի Քրիստոնէութիւն, սակայն մենք ասոսի 'ի նկատի ունելով Հոփիսիմեանց ամբովական կոտորածն 'ի Տրդատայ, և Ակաթանդեղոսի և Բուզնդոյ ըսութիւնը նունէի և այն պատմական զիգաց մասին, և անտի՝ Վրաց Նախարարակիցոյ բազմութեան սրբուհոյն դէմ յարուցուծ կատաղութիւնն և զՔրիստոնէութիւն ընդունելու ընդութիւնքը, կ'ըսենք : թէ Հայոց զօրաւոր զործակցութիւնն անհրաժեշտ պէտք էր առ այն, առանց մերժելու ասորի եկեղեցականաց փոյթը :

Եւ իրօք կը տեսնենք առ Ակաթանդեղոսի², որ Քրիստոնէութեան տարածումը Տրդատայ և Ս. Գրիգորի ջանիւն եղած կը պատմէ, ըսելով. թէ, « Ե ծագաց մինչև 'ի ծագս աշխարհին տարածէր աւետարանական քարոզու-

1 Մ. Խորենացի, Բ. Կ. 22, էջ 344.

2 Գ. Ա. Ղթ, էջ 627.

թեան մշակութիւնն ո : Մաստղաց քառ
զարէն սկսեալ մինչև ցիտադեմիս, ցկա-
զարչն և մինչև ՚ի բովանդակ սահմանն
լրացըթաց, Ալանաց և կառպից աշ-
խարհացաց :

Բայց կարծուի թերեւս թէ Ադաման-
գեղսախ իսօպէրն՝ արտաքիններէն ա-
ւելի Հայոց Ներքին աշխարհաց վերա-
նորոգութիւնները կ'ակնորկին։ Ուս-
տի Փաւատոս¹ բռոգանդոցին և Մ. Խո-
րենացի² յառաջ անցնելով, ոչ միայն

կը նկարագրեն քրիստոնազօր թագաւորին խնամքն առ օտար ազգության վեցլով թէ. «Մեծաւ պնդութեամբ առնէր վրեժինդրութիւն հաւատոց և վարուց երանելին Ֆրզատ, առաւել այնցիկ՝ որք բայցակողմեանքն է էին յիշրում իշխանութեան: Այլ նոյները կը ցաւցանեն մեղի զդրիդորիս թռուն լուսաւորչի վիճակեալ յեպիսկոպոսութիւն վրաց և Աղրւանից, ըստ ինդրոյ գործակալաց նոցա, որոնք եկին ՚ի Փայտակարանէ, այսինքն Տփիխսէն առարքայ: Խորենացւոց մասնաւոր կերպով աւելցնելը՝ թէ. «Առաքէ զնա (զդրիգոր) Տըրատ բազում համարձակութեամբ, համեմարձ Մանեստրկաւ նմամբ յիշրում ազգէ արշակունեաց ու, կը հաստատեն թէ Գրիգորիս ոչ միայն բազմութեամբ երիցանց, սարկաւագաց և մեծագանձ սպասուք Եկեղեցից անցաւ այն հիւսիսարնակ ազգաց մէջ, որոնք

բաւական էին սերմաննել քանին կենաց, և այն սառուցեալ պատերուն և աշխարհաց մէջն անզամ բորբոքել զհուրն Քրիստոսի, այլ նոյն իսկ զինուորական դորութեամբ, որ և է խռովութիւն և

1 Գայր. Գ. ով. Ե. լը 11:

2 ቅዱስ የ. እ. የ. እ. 388:

3 Մովսէս կազմակատուացին ևս իւր Աղուա-
նից պատմութեան մէջ կը նկարագրէ այս հիւ-
մասկան ու ուղղվածոց նախական ժամանակի
Խոժքութիւննեանը, քրամ մասնահատութեան,
մարդագոյնութեան և հիւմանուական անդունէ-
սպարութեանը: Ապա Հայոց կուսարոցին և
անոր որդուց և թռուանց ձեւքազ գառնալի՞ն
քրիստոնէութեան և քաղաքակրծութեան:

4 Առան ըստ մկայութեան Մ. Խորենացոյ (Գիրք Բ, է) և Մ. Կազմանկատուացոյն էր հայկացունի, զոր Վաղարշակ թագավորեցոյ Ա.

ապստամբութիւն իսապաղելու համար :
Այսուհետեւ կը սկսին վերընձեւդիլ
Ս. Նունէի սերմանած վարդապետու-
թիւնքը : Վասն զի ըստ Բուզանդայ,
«Գրիգորիս Երթեալ նորոգեաց անդ
զեկեղեցիսն լուսաւոր կարգով առաջ-
նոյն Գրիգորի հօրն գործոցն նմանեալ ».
և ասովլ այն խուժագուժ ժողովրդոց
բազով «Գեղեցիկ կերպով պիտի զուզ-
ընթանացը ընդ բաղդին Հայաստա-
նեալլ :

իրաւցընէ Հայոց կաթողիկոսին իրաւ-
տասութեան ներքեն ըլլալով, անտի
միշտ կ'ընդունին իրենց հովիւներն և
թագաւորքը՝, Հայք են պաշտպան ա-
նոնց կրօնից և վարդապետութեանը.
աստի զհերետիկոսութիւնս և զհեր-
ձուածա՝ի բաց վարելով, և անտի զվը-
ճիւս և զկանոնս ընդհանուր ժողովոց
մերձեցընելով: Ալուանից թէ եկեղե-
ցական և թէ քաջապահան բարենորո-
գութեանց և օրինաց մէջ, զորս կ'ա-
ւանդէ Կաղանկատուացի Խր առաջին
գրքին մէջ, Հայոց ազգեցութիւնը
յայտնապէս կը տեսնուի: Միով բա-
նիւ, Հայոց պարտական են այն ազգե-
ցը՝ոչ միայն իրենց ազգային դպրու-
թեան նշանագրերն և գիտութեան յա-
ռաջնապացութիւնքը, այլ նոյն իսկ
Քրիստոնէութենէ վերջը եղած ամենայն
բարիքն, զոր քիչ ետքը պիտի տես-
նենք:

ինչպէս արեգակն հորիզոնին վրայ
խոնարհած ժամանակ բոլոր իւր գե-
ղեցկութիւնը երկնից հորիզոններուն
վրայ կը սփառ, այսպէս Արշակոննեաց
թագաւորութիւնն՝ 'ի մուտք և յան-

զուտնից վրայ Վաշաբան՝ ազգայի Արքակունիքը ։
որուն իմաստութիւնն և Աղուանից մէջ մոցա-
ցած բարենորդութիւնը ամենամեծ են և առա-
րամանաբար պատճեած են Մ. Կազ. Ճիշ և
Խ. Քլինց մէջ Բաւնաչիր, որ էր ըստ Վաշա-
բանի Մամի Նաղանկաւացցոյն ազգայի հայ-
ի և ցեղեն Սիւնեա և գիւղացին պատմութեան
նորսա: Այս Թագաւորու չորս մեծամեծ տէրու-
թեանց, Կուղեմը ըստէ, Պարսից, Յաւնաց
ու Արքաբացցոց հետ խաղաղօք, անհօք պա-
տռականանին և արքափի եղաւ, և իրապատ-
փի շնորհեանոր և կարգու բարդաւանձնոց
վկուանա: Վարդան և Վարդ Գրիգոր:

կումն խոնարհոծ ժամանակ, ժաւալեց
'ի ձեռն զիտութեան պաշտպան Մեկե-
նասայ, կ'ուզեմ ըսել թագաւորին
վլուսիապհոյ, իւր վերջին փառաւորո-
թիւնն Հայուստանի մուաւորական հո-
րիդոններուն վրայ, Հայուստան դեռ
խոպառ չի տեսած իւր խուարման օրե-
րբն, և գարու գիտութեան լուսովն՝
հիւսիսային ազգերէն ամենէն աւելի
պայծառացաւ, և անով ևս ջանաց մա-
տուցանել իրեն օգուտներն առ ազգս
մարդկան, իսկ թէ ինչպէս, տեսնենք:

ինչպէս Ասիս շատ ազգաց մէջ, այս
պէս նուե 'ի Հայո, որ է կեղրոն նոցա,
կանուխ է գիտութիւնն, Նախ Աղեք-
սանդրի աշխարհակալութեան ձեռքո-
վը սկսան ծաղկիլ զիտութիւնք, որուն
բուն նպատակն էր Ասիս ընդարձա-
կածաւալ և բազմամարդ աշխարհին
մէջ տարածել յունական գլորութիւնն
և կազմել յամենայն ազգաց քաղաքա-
կան և բարյական միութիւնն մը:

թէպէտ և Հայոց հեթանոսութեան
ժամանակի երկասիրութիւնքը մինչև
տու մեղ ուղղակի և ամողջապէս հա-
սած չեն, սակայն եթէ տոհմային և
արտաքին մատենագրաց ուշ զնենք,
կային ստուգիւ, խորենացի կ'ըսէ, թէ
վաղարշակայ և Արտաշեսի Բժամանակ
դրագիտութիւնն Հայուստանի մէջ ծաղ-
կած էր, և թէ մինչև ցԱրդար և ցե-
րուանդ եղած միջոցի պատմութիւնքն
և գիւանազգերքն ևս կը գտնուէին Ա-
նուոյ, Սինոպայ, Եգեսիոյ և Մծրնաց գի-
ւանաց մէջ: Իբրև հեղինակ անոնց
վլարիբաս, վլւզիւպ, զՂերուբնա կամ
զՂարուբնա, զիոռուհրուա և զբարդա-
ծան յանուանէ միայն կը յիշէ: իսկ
Պուտարգոս, Արտաշաղոյ համար կը
վկայէ թէ յունարէն ողբերգութիւն-
ներ ևս շարագրած էր:

իսկ քրիստոնէական ժամանակի
Հայոց գիտութեան զարգացմունքը՝
Տրդատայ և Լուսաւորչ օրերն եղած
կը համարի Ագաթանգեղոս, ըսելով.
« Տայր հրաման իւրոյ իշխանութեան
յաշխարհաց և 'ի գաւառաց բազմու-

1 Բ. Կ. Բ. էջ 174 և բ. թ. էջ 179.

թիւն մանկուց ածել յարուեսոս գլ-
պրութեան, և կարգել'ի վերայ հաւա-
տարիմ գպրապետո ... յարժանաւոր
աեղիս դասս դասս և գարման ոռճկաց
կարգել»:

Ցարակից չկայ թէ Ագաթանգեղո-
սի այս խօսքերն Դ դարուն զպրու-
թեան և մատաւոր յեղափոխսութեան
ճիշդ և ամենագործունեայ պատկերը
կու տան մեղի: Սակայն որչափ որ գդի-
տութիւնս յառաջացեալ համարինք
նախ քան զի գար, յայտ է թէ միշտ
ասորի և հելլէն գպրութեամբ վարժած
են Հայք. ինչպէս կ'ըսէ Ագաթանգե-
զոս. « Եւ զնոսա յերկուս բաժանեալ՝
զոմանս յասորի զպրութիւն կարգեալ
և զոմանս հելլէն: » Ուրեմն բուն հայե-
րէն զպրութիւնը Ե գարուն կը սկսի,
Ս. Սահակայ և Մեսրովզայ ձեռքով:

Մեր թուականին Բ և Գ գարերու
գիտութեան ամենամեծ յեղափոխու-
թիւնն քրիստոնէութեան ձեռքով, և
նոր ասորերէնի անակնկալ ծագումն
և զարգացումը յեցեսիս, կարծես թէ
բաւական հաւաստիք են այս եղարկա-
ցութեանը, թէ Նոր Ասորերէն (Տցիա-
զու) կոչուած զպրութեան նշանազրե-
րուն գիւտն կամ անոնց կատարելա-
գործութիւնն 'ի ձեռն ձայնաւոր տա-
ռից՝ այն ժամանակն եղած ըլլայ յոյն
և ասորի համբաւաւոր սովիեսաներու
շանիւր: Եւ ով գիւտ թէ անոնց վրայէն
չէ յօրինեցին հայկական զպրութեան
բազաձայն տաւաերն, որոնք յանիէւսան
և շանազիւր կը կոչուին յանուն ասորի
եպիսկոպոսին:

Ցուցընելու համար թէ իրոք հայե-
րէն զպրութեան բազաձայն տասերը
կային կանիսաւ, և ասոնք էին ասորե-
րէնի վրայէն հնարուած դանիէլեան
բառած նշանագիրը, բայց 'ի կորիւ-
նէն, Ղազար ֆարպեցոյն և Մ. Խորե-
նացոյ, որ իւր Գ զրոց ժի զիսուն մէջ
որոշ կը զուրցէ: թէ մինչև քանի մը
տարի իսկ Ս. Մեսրովը և Ս. Սահակ
այն նշանագիրերով զիտութիւն սորվե-
ցուցին տղայոց, նաև կը յաւելու, թէ
« Ոչ լինելով բաւական այնու նշանա-

դրաք ստոյգ հորմիլ զհեկենայ բառից հայկականաց հադներդպար՝ մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ ։ կը վկացէ հաշականունն Փիլաստրատոս¹, որ Սմերս կայսեր ժամանակ ՚ի Հոռովմ կը կենար, թէ ՚ի Պամփիլիա յալազ մը բանուցաւ, որ իւր պարանոցէն կախուած ուկեայ վինոց մ'ո՞նէր, որուն վրայ դրուած էր հայերէն վերտառութեամբ և Թագաւոր Արշակ² աստուածոյն Նիգիայ ։ և թէ այն ժամանակ Արշակ, այսինքն է Վաղարշ կը թագաւորէր իրօք Հայոց: Արքեմն աստի ևս կարող ենք եղրակացընել, թէ մեսրովքան նշանադրոց գիւտէն դրիթէ Յ դար յառաջ կային Հայոց միւտառերն և կը գործածուէին, բայց ինչպէս կը վկացէ Խորենացին, հայերէնի ամեն հնչմանց անբաւական էին:

Այս պատճառաւ մեծ սովեստէնն մեր, որ ՚ի մանկութենէն կեսարից համալսարանաց մէջ և յունական դպրութեամբ պատկեր էր իւր ուսման ընթացքը, սկսաւ ձայնաւոր նշանադրոց գիւտին հետամուտ ըլլալ, այնուհետեւ առ յոյն սովեստէս դեգերելով, իրացընէ նախ ասորի սովեստեսներէն, յետոյ Հելլենաց սովեստեսներուն հետ ունեցած երկար և գործունեայ վերաբերութիւնքը. երկրորդ՝ ձայնաւոր նշանագրոց գիւտէն վերջը՝ բաղաձայներուն վրայ բնաւ չի խօսիլը՝ հաւանական կը ցուցընէն՝ թէ ինչպէս բաղաձայն տառերն առաջններուն, այսինքն է Ասորուց նշանագրոց վրային ճարտարուած էին, այսպէս ալ ձայնաւորը, որոնք մեսրովքեան եշանազիրք կը կոչուին, Յունաց նշանագրոց քննութեամբը հնարեց մեծահանճար վարդապետն մեր: Այս վերջի կարծիքը կը պաշտպանէ նաև Հիւպշման դերմանացի լեզուագէտը:

Մենք չենք ուղեր բնաւ ուզզակի տոհմային պատմութեան աւանդածին հակառակիլ, որ աստուածային պան-

շելօր եղած կը համարի այն եօմնեաթիւ նշանագրոց գիւտն: Այս շատ հաւանական է, բայց հաւանականագոյն ևս կ'երենոյ այլոց՝ Խորենացւոյ խոսքը՝ Ս. Մեսրովքայ մնաց աեսութեան վրայ այլաբանաբար վուրցուած սեպելը: Առանց մերժելու Խորենացւոյ վիկութիւնը և անոր հաւատարմութիւնը նուազեցընել կամենալու, մենք միւս կարծեաց կողին աւելի կը հակինք: Գիտնալով որ եթէ այս կերպով եղած ըլլայ մեսրովքեան նշանագրոց գիւտն և եթէ այն՝ սակայն միշտ Աստուածոյ պարգև է և Ս. Մեսրովքայ լուսափայլ հանճարոյն և սրբութեանն արդամիք:

Հայերէն նշանագրոց գիւտէն աւելի, անոր դպրութեան անակնկալ ծաղկին՝ սուրդ ժամանակին և հասնիլն՝ ի վերին ծայր կատարելութեան՝ աւելի զարմանալի է, և գեռ անլուծանելի աւելդուած մը կրնայ համարուիլ: Արդարն եթէ ոչ հայերէն գպրութիւնն ոչիսկ զիւտութիւնք կային՝ ՚ի Հայունախիք գեր գար, ինչպէս ոմանք ՚ի տոհմային մատենագրաց կը թուին հաստատել, ինչպէս կարացին Ս. Մահակ և Ս. Մեսրովէ՛ կրկին ամոլք հայերէն գրագիտութեան՝ այնպիսի գեղեցիկ ոճով և ընտիր գարձուածով բանից թարգմանել զլ. Գիրս, քան զոր չէ մարթ լաւագունի ակն ունել յընթացս ժամանակաց. և հմուտքն անգամ՝ յերսուպացիս՝ Լաղոօզ, Վիսդոնի, և այլք, թագուհի այլոց թարգմանութեանց կոչեցին զայն:

Այսպիսի լեզուարանական միցումն, մեր նիւթէն գուրս ըլլալով, հմտագունից կը թողունք գատել:

Հայ ազգն, յառաջ քան զդիւտ մեսրովքեան նշանագրոց, յօտարութեան ցրուած վաստակասէր մեղուաց նման, յամենապինի լաւն և գեղեցիկլ կը հաւաքէր: Յետ այնորիկ, ամփոփուեցաւ իբր ՚ի մեղուանոցի իւր բազմաթիւ ու-

րէ մատենագիրէ՝ այսպէս նաև Փիլոսարատոս՝ Արշակ կը կոչէն զԱրշակունի Թագաւորու ընդհանուր անուամբ:

1 Յուն. և լուս. Գիրք. Բ. էջ 30.

2 Վաղարշ կը թագաւորէր այն ժամանակ (295) և ոչ թէ Արշակ: Ինչպէս արևմտեան ու-

սումբարամնաց և համալսարաններու մէջ։ Ակադեմիա պատուհանութեան իւր բնիկ լեզուին ճաշակելեքը ծծել զծաղիկս իւմասոնոյն Յունաց և Հռովմայեցոց, Անդրեց և Պարսից։ Անով հայ համարն հասաւ իւր աշխարհական և սուրբ գիտութեանց դագամին։

Հինգերորդ գարը սառւղիւ կարող է միայն ցուցընել մեղի, մի զի՞նի միմեանց իմաստուն պարս թարգմանչաց, որոնց շատերը՝ ինքնազիք երկասիրութեամբք ևս շատ նշանաւոր հանդիսացան։ Այս գարուս մատենագրաց գողցես ամենուն զըշէն ոսկի կը կաթէ։ Բայց ոմանց լեզուն աւելի՝ մտաց ձուլարանին մէջ զտուած կը տեսնելք զմըթերս իմաստութեան և զաղափարականին (ideale)։ Դարն ինքնին է ոսկեղինիկ, նոյնն և ապագայից համար ոսկոյ գանձեր ամբարելք բնաւ չի գաղրեցաւ։ Զեայ, կրնանքը ըսել քրիստոնէական թուեականին Ա զարէն մինչև ցջ դար՝ Յունաց կամ Ասորեց Ս. Հայր մը և կամ Երևելի իմաստասէր մը՝ որուն երկասիրութիւնքը՝ ի հայ լեզու արձանացուցած չըլլան յաւէտ յիշտատկաց արժանի թարգմանիչք մեր։

Հայք արդարեկ դ, Ե և Զ գարուն եղան խնամակալ յոյն և ասորի մատենագրութեան։ Այսպէս նաև Ժի. գարուն եղան և Կ'ըլլան հետզիեաէ անոնց մատակարարքն և ծաւալսղը վասն դի անընդհատ հրատարակութեամբ Կ'ընծայեն զերկունս նախնական դարուց առհասարակ ՚ի վայել արդի գրադիտաց Եւրոպիոյ։

Եթէ զէսք բարեպատեհք շարունակ ընդ առաջ շելլէին յընթացս ժա-

1 Դաւիթք, Մամբրէք, Կորիւնք, Մովկէսք, Ղազարք, Եղիշէք և համանամիք նոցա։ Թէպէս և ըստ Վեպութեալ Խորեացաց (Դ. Գ. Դ. էջ 499). « Ա կողմանս Պարսից սամին ։ կը գործեն Ս. Մերուրք և Կամամապուհ։ սակայն կողմանք բաժնին Յունաց իւշին հնար անհաղորդ մել այն գեղեցիկ յառաջախաղցութեանք, իւր համան և քան գշարս զայս առաւ նեաւ Նըլլադայ անդէն իսկ յաշնարհին իւրում հայացքի պատեաց և ճարատասանից բաշմութիւնս, որոնք յամենայն մրցմանս յաղըողք կը հանդիսանային ընդգէմ պերճախօսաց իւ.

մանակաց, ով կընար համնվել զանհաւան և զտարապայման հսւատացեալն Եւրոպա, եթէ ժամանակաւ հայ ազգն ևս ունեցած է իւր զրագիտութեան ուկեդարն և բազմաթիւ մատենազիքն ներ և մատենագրաբաններ, որովհեաւ մեծամեծ և անընդհատ յեղափոխութեանց ժամանակի, հրկիզութեանց և աւերմանց մէջ զարձեալ կարող եղաւ այնպիսի ձեռագիրներ վերընծոյել տոհմային և օտարազգի մատենագրաց, զորս Ելլադա և Եւրոպէ չի կարողացան առնել, իրենց ապահով զրից մէջ կենալով հանդերձ, և այժմ ատիպուած են և Հայոց օգնութեանը կը դիմեն։ Ուրեմն սյս մասին ևս խաղաց հայ ազգն իւր գերը և քան զբազում ժողովուրդս նպաստամասաց եղաւ, այս ամենակարենոր երկասիրութեամիք, որոնք մեծապէս հաշակուած են բոլոր աշխարհի զրագէտ դասուն մէջ։ նախ Եւսեբիոսի ժամանակադրութիւնն (Ծօնկուց), որուն արժէքն ուրիշ կերպով չենք կրնար արտայայտել, բայց եթէ յետագայ պարագաներով. վասն զի անով կը ներկայանան մեզի Եգիպտացուց, Քաղղէեացուց, Ասորեստանեաց և ուրիշ հին ազգաց մատենագրութեան կորսուած հատուածքը, թագաւորաց ցուցակներն, անոնց պատութիւնն և ժամանակադրութիւնները, զարձեալ Փիլուն, Սեւերիանոս, Ասկերերանի Մեկնուրիւն Մատրէի, նոյն Հօրն Մեկնուրիւն Սայեայ և ներբողեան ՚ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Եղիշեմի Համարարարաւան Աւենտարանաց, Պօղոսի թղթոց և առ կորնթացիս երրորդ անհարազատ թղթոյն մեկնութիւը. Արիստիդէս իմաս-

թոց։ Պրյերեսիոն (Պարոյր) ամենամեծ հռետորաց այս Գիք գարուն այնշափ համբաւ ստացաւ, որ հրատիրեալ ՚ի Կոստանդեայ անցաւ ՚ի Պաշտիս և անափ ՚ի յաւերժական քաղաքը (Հառովմ)։ Հնու ըստ ինդրոյ Հռովմեցւոց առ ՚ի յամահացուցանել գրուատեց զայն իւր համբաւն ևս անմահ թողուց պանձածց անդրեան և այս վերտառութեամբ « Թագուհին Հռովմ թագաւորի բանին » (Ընծայէ)։ Եւամբուն Վշտը մատափեաց ։ Դրիգոր Նազ. ի, Դաւաւ:

տասիրին առ. Աղրիանոս կայսր և ՚ի իշ-
չումն աւազակին ճառերն. Անփոքը Ան-
տիոքայ. Ասոնք ամենքն ալ բաց ՚ի վեր-
ջնոյն, այնպիսի երկասիրութիւններ են
որոնց յայն օրինավները կամ ըստ մաս-
նէ կամ բոլորովին անհետացած են, մեր
տպարանէն ՚ի լոյց ընծայուած :

Ո՞շափ աւելի ուրեմն երախտադի-
տովիւննիս պիտի շատցընէինք եթէ
մեր թարգմանչաց և անոնց յաջորդ
իմաստոնց ամբողջ երկասիրութիւնքը
միանդամայն մինչև առ մեղ հասած
ըլլային : Ասոնց վրայ տեղեկութիւն
ստանալ փափաքողը կրնայ աչքէ ան-
ցընել ՚ի Ս. Ղազար 1825 և 1829
թուականներուն իտալերէն տպուած
կրկին երկասիրութիւնքը, որ են, Qua-
dro delle opere di vari autori antica-
mente tradotti in Armeno, և երկրորդն,
Quadro della storia letteraria di Ar-
menia .

Առ ժամն կը լոենք, և կը թո-
ղունք որ հմուտ հայերեննագէտն վիլ-
լլիքրուաց խօսի Հայոց վրայ : և Նշանա-
ւոր լեզուաց (Յունաց և Ասորւց) և
զրականութեան մասին հայ ազգին ու-
նեցած սէրն, պէտք է. որ նոյնպէս սիրե-
լի ընէ մեղի և մեծարդոյ այն ազգն և
ժողովարդը: վասն զի իմաստանադոյնքն
՚ի նոսա և հանճարեղը այն լեզուներով
գրուած լաւագոյն երկասիրութիւնքը
թարգմաննելով կրնայ հայրենիքն ա-
ւանդապահ ըրին ամեն տեսսակ իմաս-
տապատում և կարեոր գրուածոց :

1 Ղազար փարագէցին իւր պատմութիւնոյ յա-
ռաջապատին մէջ, էջ 44, յայտապէս կը ծանու-
ցանէ՝ թէ շատ ուրիշ հայ մատենադիրք կային
և գարուն մէջ բաց ՚ի ծանօթ եղածներէն ըսե-
լով : « Ըստ բարու ճառու խունից տափա-
դրոց Հայոց անցու » :

Սահյուն գեռ աւելի հետաքրքրական են Բու-
զանդայ և Արաթանգեղոսի վկայութիւնքը, ո-
րոնց առաջնորդ կը Գ Դարձութեան Ա. Գլուխու-
մէջ Տրդասայ գործոց վրայ խօսելով կը յաւ-
շը, թէ Ա. Ան ամենայն (այսինքն գործերն) ՚ի
ձեռն այս գործեան » : Այլոյց յոդիակի բառն՝ կը
ցուցընէ՝ թէ Արաթանգեղոսն զատ՝ ուրիշ ագ-
դային պատմէց ևս կային բուզանդէն յառաջու-
որոնց անուանին և երկասիրութիւնքը մեղի ծա-
նօթ չեն :

Եւ Արաթանգեղոս նոյնպէս իւր գրոց յա-
ռաջն գ.

Յերաւակ ուրեմն չենք սխալիր ըսել,
թէ Հայք իրենց գործունեայ ձեռներէ-
ցութեամբն և գրաւորական վաստա-
կաք Փիւնիկեցւոց կը նմանին : Որով-
հետեւ իրենց զիտութեան և արուես-
տից բարձրագոյն կէտը վերացած ժա-
մանակ՝ չեն դանդաղիր գարձնելու ի-
րենց տեսութիւնը հիւսիսական ան-
գրագէտ ազգաց վրայ, յորս դար մի յա-
ռաջ տարած եցին զբրիսամնէութիւնն :
Բայց այն ժողովուրդներն Ս Գրոց թար-
գմանութիւնն և աղջային գպատութիւն
շոնենալուն պատճռառաւ, տակաւին
գոգցես զուրկ մնացեր էին անոր բա-
րոյական և կրօնական գաստիարակու-
թենէն :

Սուրբն Մեսրոպէ՝ իրեւ նոր ոմն կադ-
մոս կ'ուղեւորի ՚ի վրաստան (անշուշտ
խնդրանք անոնց եպիսկոպոսին Մով-
սիսի), « հանդերձ Զաղայիւ ումամբ
թարգմանաւ հելլէն ² և հայ լեզուի »,
կ'ըսէ խորենացին և անոնց նշանագի-
րերն ևս կը ստեղծէ « տուեցելովն՝ ի
վերուստ շնորհաւն » :

Հօս արգարեւ հայ Հերոդոտոսը՝ Զա-
ղայ հելլէն և հայ լեզուի թարգմանին
յիշատակութեամբը, որ էր օգնական
Ս. Մեսրովիայ, կը ցուցընէ թէ Վրաց
նշանագրերն ևս յունական նշանագրոց
վրայէն ճարտարուած ըլլան ՚ի ձեռն
Մեսրովիայ : Ինչպէս և տուեցելովն՝ ի
վերուստ շնորհաւն բառերովը, լաւ ևս
կը թուի հաստատել նախնարար ըրած
մեր ենթադրութիւնը, այսինքն թէ խո-

ռաջարանին մէջ կը հաստատէ, ըսելով. « Ուր (չի
գիտութիւն թէ ոյք են) հարցեալ զնորդուն նո-
տեսնան պատմեցի նոցա և զժրագիր կարգեալու
և ասացի նոցա » : Անուշտ այդ հայրական
ըստուծ մասնից մըն էին Մարգարա սատիսան
և Մարտին Մծունեցին և այլք անծանօթք :
Եւ Ս. Խորենացին կամ այս վերընյան և կամ
ուրիշ պատմագրաց անծանօթք գոյութիւնը
կը հաստատէ իւր Ա. Գրոց նի գլուխումէջ որ
բարձրաւունեանց ցեղին վրայ խօսած ժամա-
նակ կ'ըսէ. « Ասելի մանց անհաւատի նարդ...
՚ի Հայկաց զթագագիր ազգգ մնել բագրատու-
նեաց » :

2 Այս իսկ ապացուցութիւն մ'է նախնարար
ըստուծութէ մէջ մերովիքեան նշանագրեքն ՚ի նը-
շանագրոց Յունաց ճարտարեալ էին :

3 Գիւբբ. Գ. գւ. Մի. էլ. 499

բենացին ռտեսիլ և չնորհ» բաւերն հօս այլաբանորէն գործածած ըլլայ՝ սուրբ վարդապետին բնատուր հանձնարոյն և մտաւորական տեսութեանցն օրինակ :

Բաց ՚ի նշանագրոց գիտէն, ուսումնարաններ կը յօրինէ, աշակերտներ կը ժողվէ և զջէր խորձենացին և զլուշէ ջարոնեցին վարդապետ կարգելով վրաց, կը դիմէ յաշխարհն Աղուանից : Անոնց լեզուի նշանագրերն ևս կը ստեղծէ, ըստ վկայութեան խորենացւոյն և Ա. Կալվանիասուացւոյն, բնինիմին շընորհաւոր կուռած թարգմանին գործակցութեամբ :

Աղուանից նշանագրոց մասին թէ պէտ և խորենացին չի զուրցեր թէ հրաշիք եղաւ և ոչ իսկ թէ ինչ լեզուի նշանագրոց վրայէն հնարեց, բայց այնպիսի պարագաներ կը պատմէ, որով չենք տարակուսիր ըսել թէ ոչ Յունաց և ոչ ալ մեսրովքեան նշանագրոց նմանութեամբ էր, այլ ասորերէն նշանագրոց վրայէն : Որովհետեւ Զազոյ քաջ հելլենագէտն, և հայ թարգմանը, զոր մի և նոյն ժամանակ գրեթէ տարաւ Մեսրովք ընդ. իւր ՚ի վրաստան, հօս բնաւչի յիշուիր, այլ անոր տեղ բենիամին թարգմանը կը յիշուի, որոյ համար կը սէ խորենացի, թէ վասակ Սիւնեաց իշխանը զրկեց Անանիա եպիսկոպոսին խնդրանօք, և որու անունէն իսկ կը տեսնուի թէ ասորի մ'էր : Բ. Աղուանից լեզուն, ըստ ասելոյ խորենացւոյն, կողորդախօս, աղխազուր, խժական և խեցբեկ էր, որուն ասորերէնը միայն կը յարմարէր հնչելու՝ որ քիչ ձայնաւոր ունէր :

Հօն ալ նոյնպէս ամեն բան կարդի դնելէն վերջը, իւր Յովիսան աշակերտն ուրիշ քահանայից հետ վերակացու կը կարգէ անոնց, և Արսվագէն ժագաւորին դրան . և ինքն կը փութոյ առաքելական եռանդով վառուած առ կազըս և առ ամենայն խուժագուժ աղինս Պահակին կամ Դիրանցն ձորայ, զորս նուածեց Մեծն Աղեքսանդր, կըսէ Մալ-

սէս կազանկատուացի պատմից իւր պատմութեան գրոցը մէջ : Մինչև Սաւրումատաց կամ Սարմատացւոց մէջ ևս ուսումնարաններ և գիտութիւններ մըտուց և քրիստոնէութեան նախատարերքը երմաննեց ։ Յետ ամենայն բարեկարգութեանց կը դառնայ ՚ի Հայաստան թարգմանութեանց պարագելու :

Անշուշ Ս. Սահակայ և Մեսրովքայ յորհիւն, որք ինչպէս իմաստութեան, այսպէս նաև իրը յունական քաղաքադիտութեան գարձագոյն և աննման անձնաւորութիւններ՝ արժանի են բոլոր Եկեղեցական հարց մէջ՝ Ս. Բարոսի և Եսենքիսի բարձակից և նմանակից ըլլալու. ապագայք զեր ուրիշ շատերկասիրութիւններ ևս պիտի տեսնէին, եթէ այս կրկին արգելքը զանոնք յեսա չի կասեցնէին . նախ Պարսիկք, կը վըկայէ խորենացի, թէ մեր աշխարհի մէջ գտնուող յոյն զրքերն այրած էին, այնպէս որ Ս. Մեսրովք երբ գարձաւ անդ, գտաւ զամուակիցն իւր զբաղեալ յասորի թարգմանութիւնս : Բ. Վերակացուաց ձեռքով ամենուրեք արգիլած էին յունարէն գպութեան կիրառութիւնը :

Ա. Ա. Զ.

Ցկուրին մի ՚ի վերայ Պարքե. և Աղակումի բազաւոյաց հարատորեանն ՚ի Հայու . Հայաստան միշեարերդ ՚ի մէկ երից ինքնականութեանց, այսինքն է Պարսիկ, Հայովանացոց և Յունաց . Հայ ազին այս շրամին մէկ ունեցած ազիցուրինն և մնժագյեն օգուսներն . Անդունմ Արքակունի բազաւոյարեան Հայոց . Անոր տիսոր հնաւաերենին կամ անմիշական յեղափոխութեանը Արևելեան և Արևելեան պետութեան . Եղակացուրին :

Արշակունի թարգաւորութիւնն որչափ որ մերձաւոր է ժամանակաւ և նոյն իսկ ըստ բաւականին ծանօթ նաև արևմտեան պատմագրաց, սակայն նոյն շափ ևս կինանք ըսել թէ անոր ծա-

գուման և պատմաթիւնը զանազան խոր հըրգաւոր քողերով ծածկուած է, յետապայ պարագայից պատճառաւ, որք են. Նախ Մակեդոնացւոց կամ Սելիկեանց ժամանակի խառնաշփոթ դրութիւնք իրաց, յորում ժամանակի՝ ըստ վկայութեան Մ. Խորենացւոյ՝ «այր զարարիք ելեալ կ'ուղեն տիրել Հայաստանի»: Բ. Մի և նոյն ժամանակ Հոյոց և Պարթեաց հետ կ'ապստամբին՝ նաև Հնդիկը կամ Բակորիացիք, Պարսիկը, Ասորիք, Սկիւթացիք և կապաթովկացիք, որոնց ինչպէս աշխարհաց՝ այսպէս նաև ազգային մերձաւորութիւնքն և թագաւորական հարստութիւնքը կը շփոթեն և շփոթեցին յանախ արևմտեան պատմագիրք, անիսրափիր ընծայելով անոնց Արշակունիք վերադիրն: Գ. Այն միջոցին անընդհատ պատերազմաց և ապստամբութեանցը վրայ՝ կրկին կնճիռք ևս կ'աւելնան, աշխարհազրական դրից փոփոխութիւնքն և արեելեան և տոհմային մատենագրաց գործածածած ժամանակագրութեան անհամաձայնութիւնքն ընդ ժամանակագրութեան արևմտեան պատմագրաց:

Տոհմային մատենազիրք մեր՝ ընդմարդասեան աւանդութեան կամ ընդխորենացւոյ՝ ոչ անդրագոյնն ՚ի վեր կը հանեն քան զամն 150 նախ քան զիբիստոս՝ սկիզբն Արշակունի պայտատութեանն ՚ի Հայաստան, և ոչ իսկ որոշակի կը ցուցընեն թէ Հայկազունեաց իշխանէ մը յառաջ եկած էր նա. ոյլ Պարթեաց՝ Արշակայ քաջին եղրօրէն վաղարշակայ, և թէ Արշակ թագութեր ՚ի վերայ Պարսից:

Իսկ արտաքին պատմագրութիւնն Դիսոդորի Յ. Ապահանոսի Ս. Ստրաբոնի Յ.

1 Տաէ. Տար. Բ. գլ. Ա. էջ 63: Մ. Խոր. Բ. Ք. Ա. է. Բ. էջ 153:

2 Այս Մարգէն էւր Պատմ. Արշ. երկասիրութեան մէջ երեք պայտատութեան կը բաժնէ այն հարստութիւնն. այսինքն է, Արշակունիք Հնդկաց, Արշակունիք Պարսից և Արշակունիք Հարթեաց:

3 Արեկիցացի հատակ:

4 Ասոր. 45, 46, 55, 66:

Պողիթիսափի և Պլուտարքոսի, անբարձէք ունին այս նկատմամբ: Վասն զի Մեծին Աղեքսանդրի Հայաստանի տիրելէն մինչև ցամն 189, Հայաստանի մէջ հանդիպած զէպքերն յիշատակելով՝ կը պահեն անընդհատ թել ինչ Հոյոց ինքնավարութեան կամ հայկագունդ իշխանաց մինչև ցիթագաւորութիւն Արշակունեաց և կամ Պարթեաց, Բատ վկայութեան պատմագրացն, նախ Մեծն Աղեքսանդր՝ Հայաստանի կուսակալ կը կարգէ զՄիհրան ոմն, որ Դարեհի ժամանակ Սարդիացւոց պահապան էր: Բ. Յամին 245, կը յիշուի Արշամ անուամբ իշխան մը ՚ի ծոփաց աշխարհին՝ յանոն Արշամաշատայ: Գ. Յետ պարտութեան Նեոպոլումէսուի յեւմենեայ, կ'ապստամբին Հայք ՚ի Մակեդոնացւոց, և Արդուատ անուամբ մէկը կը թագաւորեցընեն: Այս թագաւորիս մահուանէն յետոյ կ'ըսուի՝ թէ Սելևկիացիք նորէն նուաճած են զՀայաստան: Բայց անոնց կողմանէ կուսակալ դրուած հայկազն Արտաքսիաս կամ Արտայաս կը թագաւորէ յամին 189 կամ 190 Հայաստանի վրայ, և Աննիբալայ խորհրդովը, զոր մարդասիրապէս հիւրընկալելով պաշտպանեց անոր թշնամենաց գէմ, կը շինէ զիարքեղոնն Հայոց, կ'ուղեմըսել, զանապիկն Արտաշատ: Կը յաւերթանայ այնուհետեւ անոր վայապատութիւնն Հայաստանի թագաւորական գանդոյից վերայ՝ յաղթական հանդիսանալով Անտիոքուներու ամենայն կերպ բռնակալութեանց գէմ:

Օտարազգի պատմագրաց այս վերջին աւանդութիւնն, որ յամին 190 կը գնէ Հայաստանի Արշակունի թագաւորութեան սկիզբը, ոչ միայն չի հակա-

5 Ֆլ. Գիւք:

6 Մասցորդ. Պար. իջ. գլ. Զ:

7 Ցամին 170-160 կը յիշուի Քուերքսէս անուամբ թագաւոր մը, անուշութիւնը լԱրտաքսիաս: Ասոր և վերցիշեալ իշխանաց դահեկանները ևս կը դուստինից այժմ Հայոց սեպահական խորքը. (Ախսկոնդ Պատկերագ. յան. Տում. Բ. գլ. ԲԲ. և Տախտակ. մ. ջ. 1, 2):

ռակիր տոհմային աւանդութեան և
բնաւ չեղծաներ զայն, (որովհետեւ 40
տարիի կանուխի է ժամանակաւ և այս
միջոցիս մէջ կրնանք զետեղել վերոյի-
շեալ աւանդութիւնքը), այլ մանաւանդ
մեծ լցոն կը ծագէ մեր Արշակունեաց հա-
րբատութեան խորհրդական վհից վրայր
Յիրաւի նա կը ցուցանէ, Ա. թէ
490 տարի նախ քան զիրիստոս և յա-
ռաջ քան զթագաւորել ցեղին Արշա-
կայ Պարթևի, կը թագաւորէր Հայոց՝
հայոցի Արտաքսիասայ ցեղը - Բ. Յա-
մին 450 կը սկսի թագաւորել Հայոց
'ի ցեղէն Պարթևաց՝ Վաղարշակ, կամ
Արտաքսիասայ հայազգւոյ պայազա-
տութիւնն ընդհատելու պատճառաւ, և
կամ Պարթևաց և Պարսից Արշակունի-
ներուն աշխարհակալութեան և Հա-
յաստանի Արշակունեաց կամ Արտա-
շիսեանց հետ ազգացութիւն ունե-
նալովն: — Գ. թէ ոչ միայն ժամանակի
ետևառաջութեան՝ այլ նոյն իսկ պայա-
զատութեան և ցեղական խորոց մը կայ
ընդ մէջ թագաւորացն Պարթևաց և Ար-
շակունեաց, որ դեռ մեզի քաջածանօթ
չէ: Ռւսափ ոչ միայն տոհմային պատ-
ճառգրաց, այլ նոյն իսկ օտարա պազաց ո-
մանց վրիպակ՝ և խառնաշչիոթ կէտ մը
կրնայ համարուիլ այս, զոր առանց
խորութեան ժամանակի և ազգակա-
նութեան գրեթէ միշտ իրեն վոմի ինչ
կը վարեն Պարթև և Արշակունի թա-
գաւորաց ոկզբնաւորիլն և պայազա-
տութիւնքը:

Բաց ՚ի Վաղարշակայ Ա. Արշակոյ Ա.
և Արտաշեափ Ա. որսնք Հռովմայեցւոց
հետ սերտ վերաբերութիւն չունեցան,
Միջն Տիգրանայ և Արտաւաղպայ մո-
սին ոչ միայն Տիգրոս Լիւկոս և կիկերոն՝
այլ նոյն իսկ այն թագաւորաց զրամ-
ներն համաձայն կը պատմեն ընդ տոհ-
մային մատենազրաց մերոց:

Սակայն յամէ 34 նախ քան զիրիս-
տոս մինչև ցամն 300 յետ Քիրիստոսի
կարծէք թէ Երկու կը բաժնուի Արշա-
կունի թագաւորաց, կամ լաւ ևս ըսե-
լով, Հայաստան ՚ի ներքին և արտաքին
արարուածոց պատմութիւնն և ժամա-

նակագրական յառաջսադացութիւնն է,
թէպէտ և չկայ իրօք այնպիսի կէտ
մը, յոր արեւմուեան և տոհմային մա-
տենագիրը մեր ըստ ամենայինի զուգ-
ընթանան, ինչպէս կը զուգընթանան
նախայիշատակիեալ Երկու թագաւորաց
նկատմամբ, բայց միշտ միարանութեան
թել մը կը տեսնուի Երկուստեք: որ
թէպէտ և սարդիստայինի պէտ նուրբ
է և ՚ի մժան անդ հազիւ տեսանելի, սա-
կայն ընդ իւր կը ելով զփայլս բացա-
յայտ ինչ ճշմարտութեանց՝ կարող է
դէմ զնել որ և է ընդոսա ընթացից և
յանդուդն յարձակմանց դէմ: Օրինակ
իմն, Արտաշեափ աղայանօք զջրայիհա-
նոս հաշտեցնելն, և Տիրանայ վերա-
դառնալն ՚ի թագաւորութիւն իւր Դու-
կիսի Վերոսի օգնութեամբը:

Ուրեմն ինչպէս յէ մարթ բացասել
զաւանդութիւնս վերջոսի Պատերկու-
դոսի, Տակիտոսի, Սուետոնի, Ցովսե-
պոսի և Պլինիոսի, վասն զի ճշմարտա-
սէր քնննիք են, և դրամիներէն հանած են
զանննիք ըստ մեծի մասին, այսպէս ալ
չէ և չէ ներելի մերժել տոհմայինն պատ-
մագրութեան աւանդաներն, յորս մա-
նաւանդ բաց ՚ի քանի մի թեթև տա-
րաձայնութենէ մասնական դիպաց և
անձանց, ընդհանրապէս գեղեցիկ կը
զուգընթանան Արշակունի թագաւո-
րաց մամին՝ Մարտրաս կատինա, Մա-
րաբրա Մծուրնեցին, Ագաթանգեղոսս,
Բուղանդացին ֆաւստոս, Զենոն Գլակ,
Եղինիկ և Մով. Խորենացի: Խոհական
քննագատութիւնը չի կրնար հաստա-
տել, թէ հայ չերոդուոսն իրմէ յե-
րիւրած է Արշակունեաց պատմու-
թիւնն առանց ստուգապատում հա-
ւաստեաց. որովհետեւ մեր աշխարհի
Երգերն, անուանք տեղեաց և ասոնց
նման կենդանի և անխօսուն աւան-
դութիւնք՝ անոր աւանդաները լաւ
կ'երաշխաւորեն:

Յամէն 300, կ'ուզեմ ըսել, ՚ի Մե-
ծէն Տրդատայ մինչև ցԱրշակ Բ. կը սկը-
պէն իրարու մօտենալ արտաքին և
տոհմային պատմագրութիւնք: թէպէտ
և հանդոյն Երկրագնտոյս և լուսնի փո-

խադարձաբար իրարմէ լցոյ կընդունին, սակայն կիրառութիւնք տարբեր ժամանակագրութեանց, ներքին զբաղ մունք թագաւորական յօրինուածութեան, արտաքին աղերոք կամ գեսպահական բանացնացութիւնք և ասոնց նման որիշ խափանարար պատճառք՝ խորոց անկիալընդ այս և ընդ այն կ'արդ գելուն անոնց միաբանութեան լցնի և 'ի մի կեդրոնացումը. մանաւանդ թէ մերթ զմին և մերթ զմիւսը այնպէս կը խաւարեցընեն, որ չէ մարթ բացայաց կերպով և 'ի մի կէտ շշափել այն կըրկին պատմագրութիւնքը ըստ ամենայն դիպաց :

Սակայն յԱրշակայ՝ յրաժանումն յերկուս Հայոց թագաւորութեան, այնպէս կը մօտենան իրարու, որ կրնայ ըսուիլ իրաւցընէ՝ թէ ոչ միայն ձեռք ձեռքի կու տան, այլ և մատչին 'ի համբոյը միաբանութեան :

Իսկ անտի մինչև ցլերջ թագաւորութեան Արշակունեաց այնպիսի բառուգութիւն և դրագընթացութիւն դիպաց և ժամանակագրութեան կ'առնու տոհմային պատմագրութիւն Արշակունեաց, որ ոչ միայն պէտք չունի արտաքնոց երաշխառութեան, այլ մանաւանդ թէ նոյն ինքն է երաշխառութիւն տուող օտարազգի պատմագրութեան և գդուարակննիւն անգամ՝ դիպաց Արշակունեաց Հայաստանի, և անոնց դրացի ազգաց վճիռ հատանողն են Մ. Խորենացի, Կորիւն, Եղիշէ և Ղազար փարպեցի :

Ըստ աւանդութեան մարիբասեան պատմութեան, քաջն Արշակ զեղբայրն իւր Վաղարշակ 'ի գահն Արշակունի թագաւորութեան Հայոց հաստատած ժամանակ, ստուգի հաստատեալ ամբացոյց այնու զթագաւորութիւն Պարթեաց: ինչպէս յառաջ քան զայն Եղինք կամ Արեւելիացիք զնիրտաքսիս հաստատելով 'ի թագաւորութեան՝ ուղեցին անշուշտ անով Պարսից դէմ պատուար մը կանգնել և Արևելեան տէրութիւնն ապահովել:

I Հինգ պէտութիւնք, Հա. Ա. էջ 261.

Յիրաւի երկուստեկք ես այն պետութիւնքն հասան իրենց նպատակին: Վասն զի Արշակունի թագաւորութիւնը դամ մի ստանալով վսդի և զորութիւն յաղթական և սամսոնաբար խոելով զշլիմայս բռնակալութեան, որոնք կաշկանդեալ կը պահէին զնա, այն ժամանակիւն մինչև ցվերջ մեծամեծ ծառայութիւններ մատոյց հիւսիսային ժողովուրդներէն զատ նոյն իսկ Արեւելեան և Արևելեան ինքնակալութեանց, զորո չի կարողացան առնել թերեւս արիական գունդք Մատենից Պարսից և յեղեւնաց Հավամայեցոց, յընթաց ինն դարուց :

Հայաստան, այս ամենուստ անմատչելի լերանց շղթաներով պատսապարուած աշխարհն, որ ըստ բազմահմուտըն Ռաւիլինսնին՝ և Ճ. Շմիթի, բոլոր Ասորեսասանեաց և մարտական թագաւորութեան շրջանաց մէջ բնական միջնաբերդ եղած էր Հայկազունի հարըստութեան իշխանաց, այսպէս ևս յետ այնորիկ, կրնանք ըսել թէ Արշակունեաց կամ Հայոց թագաւորութեան Բ հարստութեան շրջանին մէջ հարկ էր որ ըլլար և եղեւ իսկ միջնաբերդ հաստատութեան և տեսելոյ Պարսից և հռովմէական պետութեանց, փոխագարձարար և սքանչելի իմ ազդեցութեամբ :

Մըրին՝ հանգերձ Միջագետաց կամ Աղիաբենի հիւսիսային մասովն անդըստին 'ի վաղ ժամանակաց ըլլարով արքայանիստ Արշակունի թագաւորացն Հայոց, մէկ գար յետոյ երբ Արեւմտեան ինքնակալութեան արշաւանքն և թշնամական վերաբերութիւնքն սկրսան ընդ պէտութեան Արևելեաց կամ Պարսից, բարձրացաւ իւրեւ ամրոց ինչ անմատոյց ընդդէմ սպառնալից հոսանց նոցած դէպ յԱրևելս, ինչպէս յետոյ ժամանակաւ ալ եկաց ընդդէմ Արևելեացից կամ Պարսից՝ շարշաւելու Արևմտեան տէրութեան գտառներն :

Արգարեւ Տիգրանակերտ և Արտագելք, անմատոյց վայրք բնութեան, 'ի հարաւային սահմանածայրս Հայաս-

տանի, եթէ կը ներուի բոել, էին կըր. կին պանպանակը ապաւովուրեան (Valvul de la sécurité) ընդգէմ հեղեղասաս լեզէնաց Հռովմայեցւոց 'ի Պարսկաստան և 'ի Պարթ Աստան, ինչպէս նաև պարսկային Մատենից դէմ' շարշաւելու 'ի Կուսակալսւթիւնս Հռովմայեցւոց կամ յԱստրիս: Այսպէս ալ Արտաշատ, գործ իրացցնէ արժանաւոր հայկալն Արտաքիսասայ և Աննիրաղայ զինուորական հաճարոյն, զոյդընդ երուանդակերտի և ամրոյն Անոյ, եր յարսմանեան և հիւսիսային մասին Հայաստանի, ընդգէմ ամենայն յարձակմանց սկիւթական հրոսակաց, Հայթալաց կամ Հեփթաղաց, Աղուանից, Վրաց, Ալանաց և ուրիշ բազմթիւ և խուժագուժ ազգաց, զորս յիշատակեն եղիշէ և Ղազար փարպեցի:

Ընդմացս պատմութեան¹ Արշակունեաց և Սասանեանց կը տեսնենիք զշայաստան իրրեւ միջնաբերդ իմն, որ յամէ 87 նախ քան զբրիստոս կը սկսի առինքն ձգել զահագին և զանընդհատ արշաւանս Հռովմայ ինքնակալութեան: Պատճառը թէպէս և յայտնի է, սակայն կիկերոնի վկայութեանը վրայ հաստատուած, կրնանք ըսել՝ թէ Հայոց տկարութենէն աւելի՝ մնջութեան և փարթամութեան փայլէն զօշոտեալ՝ կը դիմն անդ Հռովմայեցիք 'ի Միջագետաց, յԱսորուց և 'ի Պանտոսէ:

Բայտ վկայութեան պատմադրացն Հըսովմայեցւոց, Հայաստանի ընդարձակ դաշտերը լի են անոնց լեզէնախումբ

1 Դիրոն, Հ. 12, 21: Ապարատիանոս, Կար. 6:

2 Լուկուլոսի Արտաշատ քաղցին մօս Տիրանայ Հետ ըրած ճակատամարտը Պլուտարքոս միայն կը պատմէ, այն քարտարին վրայ խօսած ժամանակ, բայց անսույց կ'երկիր, որովհետեւ ոչ միայն տռհայրն մասենագիրը մեր բնաւ չեն յիշատակեր, այլ նոյն ինքն կիկերոն՝ Վուրենայ մասին խօսած Ճառին մէմ Տիրաբանակերտի վրայ միայն կը խօսի, ուր իր եղոր եսու այն պատերազմն, և ոչ ընաւ Արտաշատի վրայ:

3 Տիրգրան ձեռք կարկառելով Միջարդատայ, որ իրեն ապաւինած էր, Պանտոսի կողմէն ահաւոր հարուած մը տուին Փարփոսի և Տիրաբանի զրաց, 7,000 հոգի ջարդելով: Աշոտի թէ Տիրգրանեած էր: Միջարդատեանք բնաւնջ կ'ընէին Հռովմայեցւոց բանակը, եթէ Միջր-

բանակներովը, Միջդամբը, Կրասուկը, Լուկուլոսը, Պանմէտուք, Անասոնիուք, Գամանուք, Մուրեննուք, Տրայիսանուք, Գերմաննիկուք, Ներոնիք, Կորրուլզուք և Թէկիրիտուք, ովկիիանու անսանձ աշեաց նման միմւալով, մի զկնի միմեանց կը թեսակոփեն մինչեւ 'ի խորս² իսկ Հայաստանի: Բայց երբեմն սաստիկ տարածուելով անոր ընդգարձակ դաշտաց և անել լերանցամէջը, և երբեմն ալ չարաշար զարնուելով այն միջնաբերգին, միահաղոյն անոր պարսպացներքն ընաշխանջ կը խորտակին³, քան զինքեանս հօք բանակաց և քաջանուու պատերազմուզաց հանգիստելով, որոնց թուէն են Միջրդատ, Սուրէն, Արդար, Բակուրը, Բարզպարիան Խշտունի, և այլ հարկատու և գաշնակից զօրավարներ. որոնք բաց 'ի շեղ յաղթութեանց՝ զորս երկիցու և երիցու տարան ընդգէմ Մուրենայ և Լուկուլոսի, զկրասոս իսկ հանդերձ 40,000 լեզէոնք Հռովմայեցւոց և արծուէնչան զրօշուք յաւելին 'ի յաղթանակ հայազգի աշխարհակալին Տիրգրանայ և թագաւորին Պարթեաց (Արտաշիսի) մերձ 'ի կարրէս, ըստ վկայութեան Ավրատեայ⁴ և Մ. Խորենացւոյն⁵: Իսկ զօրաւորագոյն գտնուած ժամանակին, յաճախ Հայաստանի քարաշէն և մնելէն պարրապաց վրայ թափելով իրենց զինուց և զրութեան ցասումը, հուսկ ապա հաստատութեամբ դաշնաց⁶ Հայոց ոսկին և արծաթն առած անզրէն յեսան կը վերաբանանի: Այս շրջանին մէջ հայ ազ-

գտան վկայութեամբ չըլլար: Եւ իրք ամենէն աշելի ազգու վկայ են առ այս բանէ հօրն լատին Տարտարիսութեան, որ 'ի ճառին յաղադ Մանէն օքնաւ:

4 Դիրք Գ. Ք. Բ.:
5 Գիրք Բ. Ք. Ժ. Ժի:

6 Եւ ամառուան Միջրդատայ և իւր որդւոյն ապատամբութեամբ պատմառու, առժամանակ մը կը ինանակը Մէծն Տիրգրան Պոմպէոսի առշն, և դաշնորդը և ուկուզ ետ կը դարձնէ Վասովմայեցիս կ'ըսէ պատմութիւնն: Բայց քիչ յետու Աշտառեաց քաջ նահասպետին ձեռքով կը պաշարէ զկասիս Անտիոք, և կը ափրէ Քերոսին Ասորուց և ուրիշ երկիրներուն, զորս Կորուսած էր: Այսպէս կ'ընէին նաև Տիրգրանայ յաջորդ Արշակունի թագաւորք մեր:

զըն շատ օգուաներ ևս կը մատուցանէ իւր թշնամնոյն իրեն երկրին արդիւնաբերութեամբքն և վաճառականական սերտ յարաբերութեամբքը, զորս տոէպ կը յիշատակեն մատենագիրը Հռովմայեցւոց :

Եւ այս կերպով Պարսից պետութիւնը կը բաղդաւորի շատ և շատ փնտամ ազատ մնալ ահաւոր թշնամնոյն մահառիթ հարուածներէն, իւր իշխանութեան տկարացած ժամանակներն. և այնպէս դարուց ՚ի զարս կը յաւերժացընէ տակաւին իւր զոյութիւնն և թագւորական հաստատութիւնն :

Հայք իրեւ քաջամարտիկ պահանորդք այս միջնաբերդին, ինչպէս Արտաշեսի Ա. Տիգրանայ Բ և անոնց յաջորդաց ունանց ժամանակ հոռվմէական պետութեան դէմ զպարսկայինը կը պաշտպանէին, պարզապէս ազգակցութեան պատճառաւ, այսպէս ալ պերուանդէն Բ զբեթէ մինչև ցվերջ առհասարակ՝ Արևմտեան պետութեան կը նպաստեն ընդէմ բռնութեանց Սասանեանց, կրօնակցութեան և ընական և քաղաքային դաշնաց կրկին պայմանօքն վարեալ Պայմանք՝ զըր հաստատեցին ընդ միմեանս կոստանդիանու և Տրգատիոս Մեծը, երդմամբ Ա. Աւետարանին, որ ոչ երբեք խոզեցաւ, ըստ վկայութեան տոհմային մատենագրաց մերոց¹, և տևեց մինչև ցթուլիանու Ռւրայող և ցՄարկիանոս :

Եւս Վաղարշու Ա և Արտաւանայթագաւորաց Պարսից, որոնք արդէն իսկ ոխերիմ և ահացուցիչ թշնամիք էին Հռովմայեցւոց, շրտում պիտի յաջորդէին Արտաշիրը և Շապուհը ՚ի ցեղէն Սասանայ: Որոնք Ա. Արմիկարայ և Աննիբալայ նման երգուեալ ՚ի սուր և ՚ի հուր, ահագին ևս կործանումն կը պառանային, ոչ միայն Հայոց, այլ նոյն

1 Զենոր Գլակ, Պատմ. Բ. էջ 40, Աբաթան, գեղոս, ՄԱ, Բուզանդ, Գ. և Գ. Տ. Զ. Զարման, Գիրք Բ. գլ. 27, Յուլիանոս՝ ՚ի բանն Ա. Ասուանական վերոք Պատմ. Գիրք ՋԱ. 1: Եղիչէ 122; Մ. Խորենացի, Գիրք Գ. գլ. Ե: Վարդան, Կիրակոս, Շնորհալի, և այլք կը վկայէն առ հասարակ:

իսկ Արևմտեան ինքնակալութեան, որոյ հետ Հայք գաշնակից էին : Սակայն գեւս մերձաւոր վտանգ չի կար: Վասն զի Հայաստանի Արշակունեաց իշխանութիւնը, Մեղքուսայի կամ ծալվային պողպատոի պէս, երկու զուիս ունէր և երկու ճիրանս, մէկն՝ ՚ի Միջադետա Հայոց և միւն ՚ի մեծն ճայաստան: Առաջնորդն վիրաւորուած և տկարացած ժամանակ՝ վերջնոյն ձեռքով զարձեալ կարող էր շնչել և պաշտպանել՝ ոչ միայն զինքն, այլ և զդաշնակիցն իւր: մանաւանդ քանի որ Արշակունիք Պարթևաց և Պարսից կանգուն կեցած, ըստ պահանջելց հարկին՝ անոր յաջորդական պայազատութիւնն նորանոր կենօք կը յաւերժացընէին :

Իսկ ըստ վկայութեան արտաքին և տոհմային պատմագրաց², Հայաստան յրնթաց բազմահոլով դարուց կը կենայ իրբեւ անանցանելի ամբարտակլնդդէմ արշաւանաց հիւմսայնոց, որոնց վրայ ունեցած ազդեցութիւնը ամենամեծ են, Առ այս բաւական է ընթեռնուլ զպատմութիւնս թագաւորաց մերոց զոր վերոյիշեալ հեղինակներէն զատ՝ կ'աւանդեն և յետին ժամանակի պատմագիրք :

Արշակունի թագաւորք մեր, որոնց տուաւ անդասին յամէ 190 այն խուժագուժ ազգերուն վարչութիւնը, միայն կարային ստուգիւ մերթ ցեղապետութեան և դաշնաց յօդիւն և մերթ գոռ պատերազմուզաց զինուքն և վաղարշակեան օրինադրութեամբ բեկանել Վրաց, Հռնաց, Աղուանից, Ալանաց, Մազքթաց, հասրեանց, Վրկանից, Զինաց և Թաթարաց արշաւանքներն, և սահման զնել անոնց ընթացիցն, որոնք Հայերէն աւելի՝ Պարսից և Արևմտեան պետութեանցը կը սպառնային³:

Անմահ են յայսմ մասին վաղարշա-

2 Տակեասի, Վեզ, Պատրկուզոսի, Ցոլսեպսի, Տիոսու Լրւկոսի, Դիոս Կափոսի, Սուետոնի, Սէքսոս Խուլիոսի, Պոլուփինասի, Եւլուպուփի, Փալուսոսի բուզանձացւոց, Արտաթանգելոսի, Մ. Խորենացւոց, Ղազարաց փարպեցւոց և այլոց մատենագրաց մերոց:

3 Մ. Խորենացի, Գիրք Բ. գլ. Մ:

կայ, Արտաշիսի թ, Վաղարշու¹, Խոս-
րովու Ա, և Մնծին Տրդատայ² հետ՝
Նոյնպէս անուանք և Նահատակութիւնք
դիւցաղնակումք Մանուելի³, Վաչէի⁴,
Սմբատայ, Մուշեղայ, Աշտայ, Բագա-
րատայ, Քաջացն Վասակայ, Գագաւոնի
և Վահանայ պէս մեծատոհմ և Քաջա-
հմաւ զօրավարաց: Սորա արդարեւ ա-
ւելի քան զերկամի Պահակն ձորաց
անտեղիտալի մնալով ոչ միայն բռնե-
ցին զանցու և զմուտունոց իրենց և ի-
րենց դրացի աշխարհաց մէջ, այլ նոյն
իսկ իրենք տարենոր աշխարհակալու-
թեամբ կը թեակութիւնն անոնց աշ-
խարհը, ինչպէս նախինթաց գլխուն
մէջ տեսանք, և այն աղջաց գժտու-
թեանց և քաղաքական բարեկարգու-
թեանց հոգ կը տանէին:

Ապերախտ են Պարսիկը և Հոռոմը,
եթէ երրեք չի ճանչցան անոնց հզօր
ազդեցութիւնն և այսպիսի մեծամեծ
ծառայութիւնքը, կամ չուզեցին Հա-
յաստանի ընծայել իրենց պետութեց
դարական փրկութիւնն և տեսականու-
թիւնը, ևս և յետ անկման նորա: Անի-
րաւեցաւ և կ'անիրաւի մեծապէս պատ-
մագրութիւն ազգացն այնոցի և որ
գրեց և պիտի գրէ զյարափոփոխ յե-
ղափախութիւնս իրաց և ժամանակաց,
եթէ բացայացտ կերպով չարձանագրէ
զանուն Հայ ազգին և բարերարու-
թեանց նորա իւր էջերուն մէջ 'ի յի-
շատուկ և 'ի գիտութիւն ապագայից:

Մնաշոռ քննազատք ներկայ ժամա-
նակիս ինչպէս կ'ուզեն թող գնահա-
տեն Հայաստանի այս միջոցի կացու-
թիւնն. սակայն հայ ազգին ազդեցու-
թեան այս մեծագոյն կէտն անխախտելի
ճշմարտութիւն է: Նշանաւոր հեղինա-
կի մը վկայութեան վրայ հաստատուած
կ'ըսենք, թէ հայ ազգն թէպէտ և ան-
զօր, բայց իւր զինուորութիւնն ունե-
ցած ժամանակներն, կարողացեր է միշտ
ինք զինքն իւր թշնամեաց դէմ պաշտ-

պանկլ: Սակայն սյս շրջանիս մէջ միա-
սին կը կրէ շրջակայ ազգաց հարուած,
ներն, կը պաշտպանէ ինք զինքը, կը
պաշտպանէ և զդրացիս իւր, կ'իյնայ և
կը կանգնի, և զիտէ մերթ Արևելեան
պետութեան և մերթ Արևելեայց հետ
խաղալ, Տրդատ Ա, ըստ վլայութեան
Յովսեպոսի⁵, ոչ միայն յաղթանակ կը
կանգնէ Արանաց և բարդաց վերայ, այլ
Պարսից օգնութեան կը հասնի, վա-
զարշու խնդրանգը: Խոսրով Ա, իւր
տասնամեաց արշաւանգը, զահաւորա-
գոյնն անգամ 'ի թագաւորս Սասա-
նեանց զլլրտաշիր հալածական կը վարէ
'ի Հնդկաստան, կ'ըսեն Խորենացի⁶,
Բուզանդ և Դիռն⁷ կասիոս, և Հռով-
մայեցւոց ձեռք կը կարկառէ: Արշակ
Բ, ՅԱ տարուան մէջ, նոյնաթիւ յաղթու-
թեամբք Պարսից զօրավար և զօրք չի
մնար՝ որ չի հարուածէ վասակայ գո-
րավարին ձեռքով, միշտ գաշնակից
մալով Արեւմնեան պետութեան:

Անգէն յետ Պապայ՝ թագաւորու-
թիւնն Արշակունեաց կը պատառի յեր-
կուս ծուէնս, կ'ուզեմ ըսել յԱրշակ Գ
և 'ի Վաղարշակ Բ: Հայաստան, այս
հզօր միջնաբերդն երից ինքնակալու-
թեանց՝ կը խրամատի: Սակայն ըստ
միաբան վկայութեան կորեան, Մ. Խո-
րենացւոց⁸ և Եղիշէի յամէն 892 մինչև
ցամմ 414 կը լեցընէ վուամշապուհ
վերստին այն խրամատը. կը տիրէ ի-
մասուուն քաղաքազիտութեամբք քան
թէ վինուք երկու բաժնին ևս կը միա-
ցընէ բոլոր նախարարաց զօրութիւնն,
կը տարածէ իւր ազդեցութիւնն 'ի
Միջագետս, և Պարսից և Յունաց մէջն
եղած անվերջանալի գժտութեանցը
վերջ կու այս:

Սակայն թագաւորք Սասանեանց
հարստութեան՝ Արշակունեաց ա-
րիւնէն օտարանալով, և իրքն արբա-
նեամբք կրակապաշտութեան, Արտա-
ւանայ մահուամբք յափշտակելով ըզ-

1 Մ. Խորենացի, Գիրք Բ. դլ. 26, էջ 343.

2 Փաւաստոս Բուզանդ, Գապ. Ե. դլ. 15:

3 Անդ. Գ. Դարբ. դլ. Ե:

4 Մ. Խորենացի, Գ. դլ. Թ. էջ 397.

5 Պատ. վասն Հրէ. պատ. Ե. դլ. Ի:

6 Մ. Խորենացի, Բ. դլ. Հի և ՀՊ:

7 Գիրք Բ. դլ. Գ:

8 Գիրք Գ. դլ. ԾԲ:

գահն Արշակունեաց և Պարսից, յետ կոտորելոյ զսերունդս նորա, ամեն չանք կը թափին օր մ' առաջ բառնալ նաև զերկորդական գահն՝ Հայաստանէ, իրենց պայազատութեան շարունակութիւնը ապահովելու վախճանաւ: Դաւաղիր մահուամբ մեծին խորովու և Արշակոյ թ, Հայաստան արդէն իսկ աւաղիի զիբք մ'առած էր: Ուստի յետ շիջանելոյ լուսափայլ աստեղացն Սահակոյ և Մեսրոպայ, որ անոր կրօնականէն զատ՝ նաև քաղութագիտութեան կրկին աչքերն էին, խաւարեցաւ Հայաստանի գիտութեան հետ՝ նոյնպէս թագաւորական դահոյից փայլը: Վասն զի յետ մահուն վռամշապհոյ թագաւորին Հայոց, թէ պէտ և կը թագաւորեցնէ վռամծ յերկիւլէ Հոռոմոյ՝ անոր 18ամեայ որդին Արտաշէս, սակայն յանուն հաւուն իւրոյ Արտաշիր կուշերվ զիս. յայսնի ապացոյց մ'էր այս թէ Սասանական անուան հետ՝ ի միասին՝ նաև անոր ցեղն ծածկապէս բրոնացած էր՝ ի վերայ գահուն: և 429 թուականին կը վերածի Հայաստան՝ ի Մարզպանութիւն Գարսից:

Աւազ, դաւաճանութեամբ Մարկիանոսի և Անտոռեայ կը կործանեն՝ ի հիմանց Սասանեանք զթագաւորութիւնն Արշակունեաց՝ ի տանէն Հայոց Մեծաց, որ տեհեց 6 դար ըստ տոհմային մատենագրութեան, իսկ ըստ արտաքնոց գրեթէ 7 դարէն աւելի: Սակայն թագաւորք Հոռոմոյ և Սասանեանց բառնալով զթագաւորութիւնն Արշակունեաց Հայաստանէն և կործանելով զմիջնաբերդն զայն հաստատութեան ընդ մէջ երկուց ինքնակալութեանց, որ երեքի վերածուած էր այն ժամանակ, հարկ էր որ ուշ կամ չուտ այն ինքնակալութիւնքն ևս կործան անկանէն: Ահաւասիկ անմիջական հետևանք օգտագութեան

թագաւորացն Արշակունեաց. ահա ակնյայտնի հաւաստիք անխուսափելի աղետից, որոնք անդէն և անդ սկսան դալ այն պետութեանց վրայ: Դարձընենք այս կտիւթիւնս պետութեան ուշագրութիւննիս այս կտիւթիւնս պետութեան Արևելից կամ Սասանեանց:

Եթէ է գարու պատմութեանն հարցընելու լլլանք, կըսէ նա անշուշտ՝ թէ Սասանեանց թագաւորութիւնը կործանողն Արաբացիք եղան: Այս ամենաստոյդ է և բնաւ տարակոյս չի վերցներ, ինչպէս օրինակ իմն անտարակուսելի է թէ գիւցազն կեսար Բրուտոսի հարուածովը տուաւ իւր վերջին շունչը: Սակայն ամենաստոյդ կէտ մ'է նմանապէս ՚ի պատմութեան, թէ Արաբացիք յէ գարուն անոր վերջնական և մահացուցիչ հարուածը տուին, ինչպէս Բրուտոս ալ՝ ՚ի մէջ այլոց տուաւ կեսարու. իսկ ըստ համաձայն վկայութեան արևելեան մատենագրաց կը համարձակիք հրատարակել թէ Գարսկաստան նախ քան զհարուածս Արաբացւոց, ուրիշ բազմաթիւ և կարեվէր հարուածներ ևս ընդունած էր արդէն մինչև իւր սրտին խորը, բոլորպին տարբեր դրիւք և յայլատարք ժողովրդոց, և իւր քաջավայելուչ թագաւորութեան յօրինուածութիւնը խանգարած էր:

Սատողիւ անդէն և անդ զկնի անկման Արշակունեաց հարստութեան Հայաստանի և խրամատելոյ միջնաբերդին, կը սկսին Պարսիկը կրել յինքեանս հիւսիսային և արևելեան ազգաց ըրոնութիւնքը: Վռամ է ՚ի Միջնագետս թէորոսի Բ հետ ըրած պատերազմին մէջ չարաշար կը յաղթաւի: Հոռոմք՝ 400ամեայ խաղաղութեան պայմանով կը յատեն Սասանեանց զօրութիւնն և հարաւային կողմէն ասհման կը դնեն անոնց ընթացեցն, ըստ վկայութեան Սոկրատոյ⁴, Սողոմնի⁵, Աղեքս. Քրոնիկոնի և Թէոդորետոսի⁶:

Սակայն Պարսիկը յետ այնորիկ

եթէ ուզէին և եթէ ոչ, չի պիտի կարենային գտնել զցանկալին խաղաղութիւն։ Յազկիբրտ թ թէպէտ և առ ժամանակ մի կը յաջողի կոչել զօրս լըփնաց, ձղրաց, վատաց, գուաց, դըղուարաց, Հեծմատափկաց, ֆասխաց, ֆասխաց, թաւասպացւոց, վրաց, Աղուանից, Ալանաց և ամենայն սկիթական ազդէմ յազկաց, վատամագրաց, զոմանս 'ի վայձուունելով, և այլոց աշխարհքը նուաճելով։ բայց յաջորդք նորա չէին կարող ընդ երկար նուաճութ պահել զանոնք, և ոչ իսկ իրեկ հաւատարիմ դաշնակիցս, ինչպէս կը պահէին⁵ 'ի սկզբանէ թագաւորք մեր իրենց հզօր ազգեցութեամբքը։ Որովհետև այն ազգերէն ոմանկ նախնական ժամանակաց 'ի վեր հայ ազգի նահապեսներէն սերեալ ազգականութեան յօդիւն և վարչութեամբ ընդելացած էին Հայոց⁶ հետ։ ինչպէս քրիստոնէութենէն վերն ալ կրօնակցութեանց յօդիւ։ իսկ Սասանանք այս կրկին տեսութեամբք ևս 'ի բացեայ էին։ ուր թողունք ապա անոնց աշխարհագրական դրից հեռառութիւնն և վարչութեան և կրօնից բռնական եղանակն։

Յամին 48⁷, ըստ վկայութեան Պրկոպիոսի⁸ և Փարպեցոյն⁹, կ'ապըստամբին Հեթիմագր, և քիչ յետոց վերը, վախսթանդ սպաննելով զուրացն վազգէն, զհայու ևս յապստամբութիւն կը յորդորէ ընդդէմ Պարսից։

Այս միջոցին կ'ըսէ քաջահմտան

Ռաւլինուն 7, սկսան Զինոց և Թուրքաստանի խաներու արշաւանդն ընդ Աքսոսգետու, որոնց բազմութիւնն անդէն 'ի սկզբան 25,000 էն մինչև 250,000 ի կը հասցնեն պատմագիրք Պարսից⁸, Մէրվ և Խորասան զրաւելով, կը հասնին մինչև ց՛տոյ, բայրը նախարարք Պարսից ահարեկած խորհուրդ կ'ընեն որ մասնեն զլուամ և և հարկատու ըլլան։ Սակայն ըստ Միրխոսնտի, այս թագաւորը յուսահատած, գարձեալ կ'ուզէ իւր նախահարց զրացի և հինաւուրց բարեկամին և օդնականին գուռուր բախել։ Որսորդի կերպարանքով կ'անցնի 'ի Հայաստան, ուր տակաւին կենդանին կար և կը հակէր զինուորական հոգին։ և անտի 4,000 էն մինչև 47,000 հայազգի գիւցաղուններու գլուխն անցած, (որոնց գիմաց, կ'ըսէ պատմագիրը, ոչ բազմութիւն զօրաց և ոչ իսկ մը սեղէն պարիսապք փղաց կը հանգուրժէին), կը հասնի 'ի մժան զիշերի թըշնամունց բանակին վրայ, որ անհոգ կեցած էր, և մեծ կոտորած մը տալով կը ստիպէ յետս նահանջել։

Զէ մարթ ուրանալ լիէ արդարե ունեցաւ Պարսկաստան խորով նուշիրուածնայ և միւս խորսավու ժամանակ իւր զրականութեան հետ 'ի միասին նաև նկարչութեան, քանդակադործութեան, երածշոտութեան, վաճառականութեան, և նոյն իսկ աշխարհական լութեան ոսկեգարն։ ինչպէս ունեցաւ Հայաստան Արտաշիալ Ա, վաղարշակայ, Տիգրանայ Բ, Խորովով Ա և Վուամշապհաւոյ օրենքն։ Սակայն այն զինուորական զօրութեան կամ աշխար-

1 Ել. 134-169.

2 Ել. 114-116.

3 Մ. Խորենացի, Գիրք Բ, գլ. մԱ, 50, 85։ Փաւաստու Բուզանդ, 2, 25, Եղիշէ 225։ Ցողան Ամառը. և այլ պատմեց յայտնապէս կը ցուցէն այդ վերջութեալ ազգաց Հայոց Թագաւորաց հարիստու և գաշնակից ըլլալ, ոչ միայն Արշակունի թագաւորաց վազարշակայ. Արտաշէն Բ, Խարովու Ա, և Տրդատայ ժամանակն, այլ և յետոց մօրզպանացն Վահանայ, Ներսէկ Փ, Ալարդանայ ժամանակը. ինչպէս Փ և ԺԱ դարուց մէջ աւ Աշոտներու և Սմբատներու հետ։

4 Արտամանգեղզու, գլ. Ա. Ել. 30, 31 լաւ ևս կը

հաստատէ ըսելով Խորով մենին համար. «Գումարէլ զգործն Աղաւանից և Վրաց, և բանալ զրունակ Աղաւանից վերց պահակին հանել զգործ Հնան» ... և թէ «վազաղակի 'ի թէփուն հասանէին (Խորովու) մեծու բազմութեամբ Աղուանք, Լիթիք, Ճիշրէ և Կասովք, զի զիւթէ արեան Արմենաց ինդրեսցն»։

5 Պատմ. Պարսից Ա. 3:

6 Ել. 358.

7 Պատմ. Սասան. ԺԵ, Ել. 309.

8 Միրխոսնա, Ել. 334։ Թապարի, Հա. Բ. 42 119, և Զենուգ-ալ-Թուոսկին։

Հակալութեան յանկարծական հեղեղն, դարական երկունքը մասնական ժամանակաց ե դիւցազանց հանճարոյն միսյն արդիւնք ըլլալով, աւելի վերահաս կործանման դուժկան կրնային համարուիլ, քան թէ երկարուուև և բարեկարգ օրինաք բարգաւաճեալ զօրութեան մաւետաբերք, ինչպէս քիչ յետոյ փորձ ցոյց առուաւ:

Միրխոնտ¹, Մալկոլմ², թապարի³, Պրոկոպիս⁴, Թիրիթ, Ղազար ֆարազեցի և Ռաւլինսոն⁵ կը վկայեն միաբանիթէ Սասանեանց թագաւորութիւնն յամին 471 այնպիսի ահաւոր հարուած մ'ընդունեցաւ ՚ի Քուշնեվազայ թագաւորէն Հեփթազաց, Կորսնցընելով 100,000 զօրաց և 3,000 փղերու հետ նաեւ զմագաւորն Պերոզ, որով կ'ըստի թէ կործանման անդնդոց բերանը հասաւ: Եւ իրօք այսպիսի տկարութեան յայտնի ապացոյցք կրնան համարուիլ նախ այս միջոցիս Վահանայ Մամիկոնեանի սակաւաթիւ զօրովով ըրած այլ և այլ յաղթութիւնքը Պարսից բազմաթիւ բանակաց գէմ, և Հայաստանի մարզպանսկան ինքնավսրութիւն ըստանալն. երկրորդ Քուշնեվազայ յաղթանակաւ ՚ի Պարսկաստան⁶ մտնելն և զորդին Պերոզի զվազարչ թագաւորեցընելն հակառակ կաւատայ և մեծամեծացն Պարսից: Սակայն այս բաւական չէ. Արևելեան պետութեան վիճակն երթարով դեռ աւելի աւաղելի կերպարներ պիտի առնու:

Յամին 481 Քուշան ըստած կասրք ևս կ'արշաւեն անդք. Ալանք, Աւարք, Բուլղարք և Մողոլք: Ի զուր կը բարձրացընեն⁷ մագաւորք Սասանեանց զբարձրաբերձ պարիսպս Պահակին ձորայ երկաթի դրամքը, անսոնց արշաւանց գէմ գնելու: Համար, քանի որ միջնարերդն Հայաստան խրամատեալ կայ, և զիւցազունքն Հայոց՝ ոմանք ննջեն

՚ի քուն մահու, և կենդանիքն՝ ընկճեալ են անոնց խթգութեանցը ներքեւ:

Տարեկոր և դարական պատերազմաց չափ չի կայ: Միայն Մամիկոննեանն Վարդան՝ 42 մեծամեծ պատերազմաց մէջ մտնած և յազդուող դանուած էր ՚ի խորսոսան և ՚ի թուրքատուան⁸: Հոռոմք Միջազիւտաց կողմէն և փոքր Ասիայէն կ'անդամէատեն զայն: Նշանաւոր են յամին 540 և 555 Բելիսարիոսի յաղթուռ թիւնքը Ճորոխ գետին մօտ: Հարաւէն ալ Արաբացիք կը սկսին այս ժամանակս նեղել զջիզբոն: Աւելորդ կը համարինք մի առ մի մէջ բերել այն ազգաց Պարսից գէմ տուած բոլոր պատերազմները, զորս արևելեան հեղենակներէն զատ: կը գրեն նոյն իսկ Սոկրատ, Սովոմենոս, Պրոկոպիս, և ՚ի նորոց Պ. Պատկանեան⁹: իսկ Ռաւլինսոնի երկասիրութիւնը կը գերազանցէ քան զամենքը, որ բոլոր արևելեան և արևմտեան պատմչաց բովանդակութիւն մի է:

Այսպէս ուրեմն շրջակայ ազգաց անդամար արշաւանաց ոտնկոխ ըլլալով պետութիւնն Արևելից, արդէն իսկ ամայացած և նիւթական բիւր խեղծութեանց ենթակուած էր: Բայց Յաղիերածի որդւոյն Պերոզի օրերն չի լրսուած երաշտութիւն մը, որով ըստ վըկայութեան թապարի¹⁰, գեհոն և Տիղրիս գետերն անդամ ցամաքեցան, անողորմ սով մը և խեղծութիւնը տիեզ Արեաց մէջ:

Նուաճեալն Հայաստան, որ իւր մեծագոյն ազգակայ ժամանակ իսկ կարեկից եղած էր միշտ իրեն դրացեացը խեղծութեանն, այսպիսի ճգնաժամի մէջ գտնուած թշնամոյն անդամ չէր կրնար անկարեկից մնալ, այլ ըստ կարելոյն մատակարարեց իւր երկրին առատ արդիւնաբերութիւնքը: Վասն զիւցարանից իտպն-Ազերայ¹¹, Պերոզ հրո-

1 Ել 349, 350, Ծրբ. Ասմիք:

2 Պատմ. Պարս. Հա. Բ. Էլ 139:

3 Հ. Բ. Էլ 137:

4 Գիւք Ա. Ք. Դ. Էլ 19:

5 Պատմ. Սասան. ծԶ, Էլ 323, 326.

6 Միրխոնտ, Էլ 351:

7 Եղիշէ, Էլ 351:

8 Արշամ, Յուշեկ, Էլ 265-266:

9 Ասիակ, օրագիր 1866:

10 Միրխոնտ, Էլ 345:

11 Միրխոնտ, Էլ 345:

վարժուակ հանած էր տէրութեան ամենային հարկատու աշխարհաց կուսականերուն և մարզպանոց օգնել ժողովրդեան :

Պատանեանց թագաւորութեան կործանման ուրիշ անդունք մ'ալ նուշիրվանայ պէս իմաստուն թագաւորի խեղաբարոյ որդին Որմիզդ բացաւ Զ դարուն վերջերը, կ'ըսէ պատմութիւնն : Որովհետեւ այն ժամանակի թէ քաղաքական, թէ զինուորական և թէ գիտութեան ասպարհովին մէջ եղող Պարսից երևելի անձինքը կոտորեց, որոնց վրայ հաստատեալ էր Սասանեանց թագաւորութեան յօրինուածութիւնն, և անոնց տեղ անպիտան անձինք դրաւ, որոնք վոանգաւոր և երկիւղալի էին քան զեղէզն ջախջախ :

Այս բարբարոսական գործոյս պատճառն որչափ որ անյայտ է՝ աւկային սուուգութիւնն և աղետալի հետեանքներն նոյնչափ յայունի են, վասն զի անժխտելի կերպով կը հաստատեն բազումք՝ ի պատմազրաց :

Այսպէս ուրեմն ըստ հասարակաց առաջին, թէ ա Աստուած նախ յիմարեցուցանէ, ապա կորուսանէ և, այսուհետեւ կը տեսնենք Սասանեանց թագաւորութիւնն որ օր քան զօր գէպ յիւր կործանման անդունզը կ'ընթանայ, իւր զեղծ դահակալացը պատճառաւ և անրնդհատ պատերազմօք ։ Եւ ահաւասիկ տակաւին զի՞նք նորանոր անոր առջել կը բացուին : Ասի ներքին հերձուածք նախարարաց և յեղափոխութիւնք, և անտի բոլոր հիւսիսային և արևմտեան ազգաց բանակը գիշակեր անգղերու նման այն կիսամեռ և վերաւոր պետութեանը վրաց սրարբելու կը դիմեն, տեսնելով անոր ներքին երկառակութիւնքը :

Հոռովք Հերակեսի և Մօրիկ կայսերաց հրամանաւն յամին 579 և 589

1 Թապարի, էջ 248 : Մասուահ, էջ 211. Միրիսոնտ, էջ 388, և Խաւընան. Պատմ. Սահան. էջ 467 :

2 Թէոփիլակոսոս, Գ.17 :
3 Ալբ, Գ. 12.

կ'անցնին զջիգրիս. Թէոփորիկոս, Մարգինոս, կինոս, կալինիկոս և Ներսէս հայկազն 80,000 բանակով կ'ընթանան երազութեամբ՝ ի Մարտատան² և ի Քիւրտիսոսն : Յամին 584 և 585 Սոլախոնի³ և Փիլիպպուսի քով եղած առաջին և երկրորդ ճակատամարտքը կը լրուցանեն Պարսիկս : Յամին 600 Ալամանտրոս Սարակինոսաց իշխանը, կ'անցնի ի Միջադեմս ընդ Եփրատ գետ և կը պաշարէ զիթագաւորանիստն Տիգրոն : Խազիկը կը ծածկեն զչայաստան և զԱրպատական : Թախթարաց մեծ խանը 300,000 մինչև 400,000 բանակով⁴ կը դրաւ է զբահլ և զՀերատու Որմիզդ, Պոմպէոս այս Սասանեան, որ հոռվինայեցւոյն պակասութիւնքը մի այն ունէր, այլ անոր առաքինութիւններէն բոլորովին զուրկինը կը տրոփէ զօրք կայ, բայց զօրավար չի կայ : Ի զուր նակ'ապակինի ի խորհուրդս մեծամեծաց. վասն զի խորհրդարան կայ, բայց ոչ միութիւն խորհրդոց նախարարաց :

Պարսից հիւպատին ըրած խօսակցութենէն զատելով, զոր կ'աւանդեն մեզի Միջինոնտ⁵ և Ղազար⁶ փարպիցի, կը տեսնուի թէ իրզ, այն ժամանակի Պարսից պետութիւնը հարուածող թշնամեաց մէջ ամենէն զօրաւորն և բազմաթիւ են Հեփթաղք և թուրքաստանի խաները : Սասանեանց թագաւորութեան գահն անոնց անդադար հարուածոցն ենթարկուելով ուրեմն է գարէն սկսեալ, ի վերջ կոյս Զեք դարուն և ի սկիզբն էտեն յերերի կայր : Խորովզ ի թէպէտ և իւր թագաւորութեան նախնական տարիները իմաստութեամբ և քտնութեամբ կը պաշտպանէ այն խարիսուլ գահը, բայց նոյն ինքն ըստ շարաշար զեղծմանց և բնածին բարուց թագաւորաց Պարսից, ինք զինքը բոլորովին հեշտախտութեց

4 Մասուահ, Միրիսոնտ, էջ 389. Թապարի, էջ 248 :

5 Միրիսոնտ, էջ 391.

6 Պուրագ, Ջն, էջ 473, և այլն :

տուաւ։ Այս թագաւորն ևս Որմղի նման, կ'ըսեն Միրխոնդ¹, թապարի², Մասուտի³ և թէօփանէս⁴, կը սպաննէ տէրութեան մեծամեծ իշխանքն և զօրավորներն և զօրքը իրեն դէմ կը հանէ։ կը պատոէ Մահմէտի առ ինքն ուղղած թուղթն, և Արաբացւոց մոլեգնութեան բոցը, սասանական շիջանուա միխրին վրայ վերատին բորբոքել կու տայ: Վերջապէս գահընիէց ըլլարվ՝ Հերինին ճեռքով կը թունաւորուի յամին 628։

Թէպէտ և անոր գաւաճանող որդին Սիրուհի, առ կենդանութեամբ հօրը Սասանեանց գահը կ'ելէ, բայց անոր հետ 'ի միասին կործանելու՝ քան թէ դարձեալ կանքնելու համար: Վասն զի այսուհետեւ կրնանք ըսել, թէ ամենէն աւելի սպառնական են Արաբացւոց հարուածներն, և անոնց իւրաքանչիւրն՝ մի մի մահառիթ վերք կը բանայ:

Յամին 550, 551, 552, 553, 555, 557, 558 - 562, 567, 570, 574 յարձակունքներով արգէն իսկ խրամատեալ էին պարիսպք Տիղբոնի, կ'ուզեմ ըսել ոստանին Պարսից, ըստ վկայութեան Ռաւակինանի: Ասկէ վերջը Սասանեանց թագաւորական գահուն հետ 'ի միասին Արաբացւոց և ուրիշ ազգաց զէնքն և զօրութիւնն ևս կը փոխադրուին 'ի Հարուան, 'ի Ռ.այ և 'ի Մէրվ:

Պատմութիւնը կը վկայէ թէ այնպիսի խեղզ վիճակի մէջ կը գտնուէր յէ դարուն Արևելեան պետութիւնը, մինչև 4ամեայ ընթացից մէջ 7 թագաւորք իրարու յաջորդեցին: Ասսի կրնանք եղարկացընել թէ ինչ աստիճան զըժտութեամբ լի էր Պարսկաստան յասաջ քան վկրծանումն իւր յԱրաբացւոց. և ճիշտ Հայաստանի Արշակունի թագաւորացն Արշակայ, Պապայ և անոնց յաջորդաց օրերը կը յիշեցընէր, որուն աղետիցը նա ինքն պատճառ և ականատես եղաւ. այսպէս ուրեմն 'ի վախճանի անոր նման դառն օրհասի

մը կը սպասէր. և ահաւասիկ օրհասաբերն առ դրան կայ:

Յամին 634 մինչեւ ցամի 638, կը տիրեն Արաբացիք Ասորւոց, Ապուպէքրի և Օմարի առաջնորդութեամբ: Անտի յառաջ կը խաղան դէպ 'ի Հայաստան: Տարօնի և Բասենոյ գտաւոներն շուտով որս կ'ըլլան Արփեկէի վագերաց: Դուին թէպէտ և աղետալի թատր դարձած է Արաբացւոց սրոյն և հրկիվութեան, թէպէտ և 12,000 անձ զոհ կը մատուցանէ, վասն փրկութեան հայրենեաց, և 85,000 գերի կը զրկէ, սակայն իւր փոքրիկ ինքնավարութեան հետ՝ նոյն պէտ և Սասանեանց թագաւորութեան կործանումը ժամանակ մի կը յապացէ, ցուցընելով իւր ապերախտ զրացոյն Պարսից, թէ ինչպէտ իւր Արշակունեաց ինքնավարութեան սկիզբն, այսպէս և վերջին շունչը տուած ժամանակ՝ որչափ մարդասիրօրէն ծառայած էր:

Սակայն յամին 640 Հայաստան բուրովին իյնալով Արաբացւոց իշխանութեան ներքեւ, այնուհետև անարգել և կայծակի արագութեամբ կը հասնին Արաբացիք Զայիթի առաջնորդութիւնը և միայն 40,000 զօրաց բանակով մը 'ի Պարկաստան, այն զիւցազնական արութեան գերը խաղալու, զոր ինն դար յառաջ խաղաց Մակեդոնացի աշխարհական, գրեթէ նոյնաթիւ զօրով տապալելով զգահն Աքեմենեան հարըստութեան:

Ի զուր Ռոստոմ 120 հազարով անոնց դէմ կը ջանայ դնել: ի զուր Սասանեանց վերջին պայազատը կը ջանայ իւր հայրենեաց վերջին ճգնաժամին մէջ Քսեղքսեսի նման զօրաժողով աւնել, կամ անոնց բազմութեան վրայ միիթարուիլ: Թշնամին շատ արագ է, և բնաւ ժամանակ չի տար այն մեծամարմին, բայց անբարեկարգ, բանակին պատրաստուելու: Զորս օրուան մէջ նեհաւէտ քաղքին մօտ եղած յաղթու-

¹ Եջ 407 և 408:

² Համ. Բ. Եջ 320 և 339:

3 Համ. Բ. Եջ 233:

4 Եջ 270:

թիւնն, որ ըսուեցաւ իրաւամբ, յաջրուրիւն յադրուրեանց, յամին 642 տէր կ'ընէ զլրաբացիս զրեթէ բոլոր արևելեան պետութեան մինչեւ ցլաս-պից ծով։ իսկ յամին 652 թաղկերտի վերնոյն մահուամբը, որ 'ի Հնդկաս-տան ապաւինած էր, իսպառ կործա-նեցաւ Պարսից թագաւորութեան գ հարստութիւնն Արաբացւոց սրով, որ սասանական հրով ոկսած էր սիրել Արեւելքի, և Հեփթաղաց, Թրքաց, Հո-ռոմնց և հիւսիսային ազգաց անդադար հարուածոց և արշաւանացը տակ ո-տրնկոխ եղած, և սպասած էր իւր կեն-սական զօրութենէն։

Թէպէտ և Սասանեանց թագաւորու-թեան հաստատութիւնն՝ Արշակու-նեաց թագաւորութեան հաստատու-թենէն Եղարչը եղաւ, սակայն շատ զարմանալի է որ մէկ դար հաղիւ աւելի կեանք ունեցաւ։ Այս իսկ արդարեւ անժխտելի և բացայաց հաւաստիք մ'է եղրակացընելու, թէ այն հարը-տութեան կեանքն և բաղդը Հայաստա-նի Արշակունեաց կենաց և բախտէն կախուած էր, ինչպէս ծառն իւր մայ-րենի հողէն, թէպէտ և հաստարուն համարինք զայն թէպէտ մեծացեալ յոյժ զօրութեամբ և փառօք։ Ուստի ընականապէս 'ի փոխել բաղդին Հա-յաստանի և կործանել թագաւորա-կան գահուն Արշակունեաց, պիտի խախտէր և եղանէր նոյնպէս և սա-սանական թագաւորութեան ծառը։

Տեսնենք այսուհետեւ Հայոց ծառա-յութիւնքը զոր մատուցին Արևմտեան ինքնակալութեան, և մի և նոյն աղե-տալի հետևանքները, որոնք յետ կործանման Արշակունի թագաւորութեան Հայաստանի, անդէն և անդ փոխեցին հորվմէտական կայսրութեան բաղդը զոյդ ընդ բաղդին Արեւելեան պետու-թեան։

Քանի որ Հոռվմայեցիք իրենց զէնքն և զօրութիւնը չէին դարձուցած Հա-յաստանի վրայ և զանիկայ տկարացու-

ցած, ազատ էին իրենք ալ Արեաց, Պարմեաց և Հոնաց զէնքերէն փոխա-դարձաբար։ Արդարն պատմութիւնն նախ քան զհաստատութիւն Արշակու-նեաց թագաւորութեան կը ցուցընէ այն արևելեան և հիւսիսային կամսկիւ-թական ազգաց գոյութիւնն և զօրու-թիւնը, բայց բնաւ անոնց մէկ արշա-ւանք մը չի յիշեր յարեմնւտս։

Սակայն հոռվմէտական պետութեան բարձրայօնութիւնը չկարենալով տա-նել Մեծին Ցիդրանայ և Միհրդատույ փառաւորութիւնը, իրենց կեդրոնէն գուրս ձգուելով զանազան անգամ ի-րենց բաղդը փորձեցին։ բայց աւելի վաստուեցան քան թէ վնասեցին։ Այլ յամին Յկ երբ Անտոնիոս զինուք ան-կարող դտնուելով դաւաճանութեամբ և վատաբար շղթայի զարկաւ զթագա-ւորն Հայոց Արտաւազդ և գրաւեց առ-ժամն զշայաստան, Արտաշէս Բ անոր որդին, ապաւինեցաւ առ թագաւորն Պարմեաց Հրահատ Գ. այնուհետև սկը-սան Արևելեան պետութեան արշաւան-ներն և թշամութիւնն ընդ Հոռվմա-յեցւոց։ Այսուհետեւ Հայաստան քար գայթակղութեան է Արևմտեան պե-տութեան։ Արշափ որ Հոռվմայեցիք գո-ուզութեամբ և անխտիր կը խառնը-ւին Հայոց և Պարմեաց քաղաքական և ներքին գործոց մէջ, այնչափ ևս կը գրգռեն Արևելեայց զօրութիւնն և կը ձգեն յինքեանս անոնց արիւնարբու-զէնքերը։

Արտաւան՝ Գ, ազգաւ արշակունի, զոր Հայը ինքնակամ թագաւոր գրին Հայաստանի, Գերմանիկոսի մահուա-նէն յետոյ բոլոր Արեաց և Սկիւթացւոց զօրութեամբն յարձակեցաւ, նուաճեց բունութեամբ ցյելեկիա եղած արե-մտեան ինքնակալութեան երկիրներն և Միջագետաց ևս կը սպառնար։

Գոտարզ՝ որդին Արտաւանայ՝ շու-տով յետ մահուան հօրն, յամին 47 կամ 49, Զեկմայի մօտ մեծագոյն կո-տորած մ'ևս կը յաւելու հոռվմէտական

1 Տակտոս Բ. Ա. Ա. Յովան Նախ. Պատ. Ժ. Ը.

2 Սարաբան, 287. Դիոն. ՄԶ. 68.

լեգէոնաց, որուն կը զօրավարէք կա-
սիս :

Սակայն Արեաց մեծագոյն արշաւան-
ներն արևմտեաց երկիրներուն մէջ՝
վաղարշի Ա ժամանակը կը սկսին : Ա-
րևմտեան պետութեան հարուածները
դոր Արտաւան և Գոտարզ տուին, դեռ
չէին առողջացած : Այս թագաւորը
յամին եւ կը պաշարէ զերբուղն 'ի
Տիգրանակերտի՝ և Պետոսի բանակը
գրեթէ բոլորովին կը փճացընէ, ըստ
վկայութեան Սուետոնի¹, Եւտրոպիոսի
և Ալբոսիոսի : Արտաւան Դ, յամին 217,
յառաջ կը խաղայ 'ի խորս Միջագետաց-
անդ կը Կորսանցընէ Արևմտեան պետու-
թիւնն իւր զըսին, կ'ուզեմըսել, զիսյ-
սրըն կարտակալլաւ : Եւ Մ'ընայ մօտ ե-
ղած ճակատամարտիւն՝ 'ի պարտու-
թիւն կը մատնին Հառվայեցիք Մակի-
նոսի զօրավարութեամբ :

Յամին 222 Արևմտեան պետութիւնն
սասանական ցեղի հարստութեամբ նոր
զօրութիւն ստանալով և Նորագոյն ա-
տելութիւնն, այնուհետև Արևմտեան
ինքնակալութեան վիճակն պէտք էր որ
երթալով աւելի վատթարանայր զի-
րեկելեանը վատթարացուցած² ժամա-
նակ . որովհեաւ յաճախ անդամ յաղ-
թողք շատ աւելի կը ֆիսասուին քան
զյաղթեալս : Մանաւանդ թէ միշտ
տեսնուած է փորձով պատերազմական
ասպարիզին մէջ այն բանը, որ հաս-
տատուն օրէնք է 'ի մերենական հրա-
հանգս . այսինքն է, երկու հաւասարա-
զօր բանակը կամ շարժուն զօրութիւնք
իրարու զարնուած ժամանակ, երկուս-
տեք ևս աւելի կը ֆիսասուին, քան թէ
անհաւասարք . վասն զի տկարագոյնը
կամ գաշամբ կամ որ և է կերպով դիւ-
րաւ տեղի տալով հզօրագունին, մե-
քենական զօրութեան պէս՝ մասամբ
միայն կը խորտակի :

Յամէն 234 մինչեւ յամն 429, կ'ու-

¹ Ներ. լթ. 3.

² Համբորիդիոս կը վկայէ, թէպէտ և Ալեք-
սանդրոս յանդեց Արտաշը և արդիւեց 'ի կո-
խելոյ Հռովմայեցոց սահմանները, բայց Պար-
սիկներէն աւելի զո՞յ ըրաւ Արևմտեան կայսրու-
թիւնն և տկարացաւ այնու: Եւ իրոք ասոր գե-

զեմ ըսել, ցբարձումն Արշակունի թա-
գաւորութեան Հայաստանի, կը բաղ-
մապատկին հետզհետէ Արևելեան պե-
տութեան արշաւանկներն և մին քան
զմիւն սպառնական, զըրս կը գործեն
անդադար Արտաշէրք, Շապուհք, Վը-
ռամք, Արմիզգք, Յազկերտք և Խոսրովք:
Յապուհ՝ յամին 241 պաշարմամբ կը
դրաւէ զիթքին, կը զիմէ յԱնտիոք, 'ի
կապատկովկիա և 'ի կիլիկիա: Յամին 259
սպաննելով զիսյարն Գորդիանոս, ան-
դրէն զդաղերիոս ևս կը ձերբակալէ:

Մակայն դեռ Արևմտեան տէրու-
թեան, որ կրկին դաշտմբ միացեալ էր
ընդ Հայաստանի, մերձաւոր վտանգ չը-
կայ . վասն զի Արշակունի թագաւորք
մեր ոչ միայն կալ և կապ ունին բոլոր
հրամային ազգերն, և Հռնաց և Սկիւ-
թացւոց զօրութիւնը տակաւին բե-
կեալ ընդ պարսպօք միջնարերդին Հա-
յաստանի՝ չի կրնար անդրագյնս յա-
ռաջել, այլ նոյն իսկ Երուանդէն սկսեալ
մեր արի և հզօր թագաւորաց մատու-
ցած ժառայութիւնքը մեծապէս նե-
ցուկ են անոր :

Մեծն խորով յամէ 240 մինչեւ
յամն 253 Արևմտեան պետութեան աղ-
մկալից և խոռվայոյզ ճգնաժամին մէջ,
յորում կայսրն Փիլիպպոս մեռներով ա-
նոր յաջորդաց ձեռքը կը մնայ տէ-
րութիւնն հնացեալ ձորձի մը պէս,
ըստ վկայութեան հայ Հերոդոտոսին³
« մարդ 'ի մարդոյ յափշտակէր զտէրու-
թիւնն սակաւամանակեայ » , խորով,
իրբե հզօրագոյն դաշնակից բոլոր արե-
եքրի մէջ, երկայն ժամանակ կը պահէ
Հռովմայեցւոց սահմաններն Արտաշրի-
ահազին արշաւանացը դէմ, և Դիկոսի «
Գաղղոսի և Վաղերիոսի թագաւորու-
թիւնը փառաւոր յազդութեամբ կ'ա-
պահովէ : Տրդատ զուգակից քաջու-
թեան հօրը, յամին 282 կ'արշաւէ ընդ-
դէմ դիմաց . և Լիկինիոս կայսեր փըր-

զեցիկ հաւասարէ են Արտաշը յաջորդաց Շա-

պահու և այլոց Ֆագաւորաց Մասնեանց, ար-

ձակ համարձակ այսուհետև Հռովմայեցւոց եր-

կիրեց մանելն և աւելիուր:

³ Խորենացի, Բ. գլ. ՀՊ: Աքամք. էջ 313:

կոթիւնն՝ ՚ի ձեռաց լեզէոնաց, պատ. մութիւնն՝ անոր կ'ընծայէ: Նշանաւոր են յամին 283 անոր հայկաբար կատարած ձեռնարկը Միջաղետաց և Ասուուց անապատներուն մէջ, ՚ի զուի հռովմէական լեզէոնաց: Յամին 284 ՚ի մենամարտութիւն՝ խիզախելզվ ընդդէմ թագաւորին Դիմաց՝ փոխանակ կայսեր, հոռվմէական բանակը յաղթական կը հանդիսացընէ, և լեզէոնաց բազմութենէն աւելի՝ մէկ անձի մ'արիական նահատակութեամբ՝ յաղթութեան դափնեպոակին հետ նաև խաղաղութեան ձիթենին կը դնէ իւր գլուխը Հոռվմ: Տիրան՝ կամուրջ կը կազմէ արշաւանաց Յուլիանու: ՚ի Պարսկաստան վանելով զՄատեանս Պարսից: Արշակ Բ, յամին 351, Հայոց ընտիր աղեղնաւորաց և հեծելոց գունդեր զրկելով կոստանդիփոսի, Մագնենտիայ բռնակալին դէմ յաղթանակ կանգնել կու տայ, կ'ըսէ պատմութիւնն ճ. Ըստ վկայութեան Ամիկանոսի⁴ և Փաւստոսի Բուզանդացոյ, 25 տարուան միջոցի պատերազմներն, զորս առ կոստանդեաւ սկսան Հոռվմայեցիք, Հայոց դաշնակցութեամբը կրցան դէմ դնել Սասանեանց զօրութեանն, և երեք անդամ վերցացին Մծբնայ պաշարումն՝ ՚ի Շապիոյ յամին 334 338 և 350: Վարագդատ՝ Արշակունեաց գահուն վրայ դեռ չի բարձրացած՝ իւր շքեղ և մեծամեծ ծառայութեամբը, զորս ըրաւ յաշխարհին Հոռոմոց և անոր արևմտեան սահմանացը մէջ՝ սլաւոնական ազգաց դէմ, բարձրացոյց զգահն Արևմտեան թագաւորութեան: Ուր թողունք ապա Յունաց բաժնին վրայ թագաւորող Արշակայ Գ և անոր յաջորդաց ինքնանուէր ծառայութիւնքն, որոնք ըստ վըկայութեան Պրոկոպիոսի⁵, յաղթական զօրաց փաղանգներ հասուցին Արևմտեան ինքնակալութեան մինչեւ ցիուստինոս:

Հայաստան նոյն իսկ իւր տկարու-

1 Մ. Խորենացի, Բ. 42. Հթ. Արտաշ. էջ 194:

2 Արտաշ. էջ 194: Մ. Խորենացի, Բ. 42. Հթ.:

3 Մաս. Թէոդոսի. Դիբք Ա. Տ. Բ: Հոսիմոս,

թեան ժամանակն բաւական էր մերթ հասարակաց իրաւունքը ազգաց ըստուած օրինգը և մերթ ալ իրեն միջնաբերդ ընդ մէջ Արևելեան և Արևմտեան պետութեանց, այն երկու ազգաց արշաւանաց առ իրեարս և զինուորական զօրութեան արգելվք զնել ժամանակ ժամանակ առ. ՚ի չի բաղկանեց ընդ մի մեանս և անջատուած պահել, և պատճառ ըլլալ մեծամեծ օգտից. որով օրինգը սահման կը գնէ այսօր թիւբրիա անսահման զօրութեան իրուսաստանի կամ սլաւոնական ցեղից և պետութեանց Եւրոպից, և առանց ուզելու կը պահէ զհաւասարակշռութիւնն խաղաղութեան, և ուրիշ քաղաքական օգուտներու պատճառ կ'ըլլայ:

Սակայն ոչ այսպէսէ և յետ կործանման Արշակունեաց. վասն զի աստի՛ Արևմտեան պետութիւնն՝ ինքը կ'ուզէ բացարձակ տէր ըլլալ ոչ միայն Հայաստանի հարաւային և արևմտեայ Երկիրներսւն, այլ և կրկին բաժնին ևս կամ բոլորին. և անտի՛ Արևելեան պետութիւնը, Ռւսաֆի այս պատճառու, ինչպէս Հոռոմոց այսպէս նաև Պարսից բոլոր զինուորական զօրութիւնն և քաղաքական ճիգը Ե, Զ և Է գարուց մէջ իրենց սեփական աշխարհաց կերպունքն դուրս ելած՝ մերթ Հայաստանի հարաւային մասին, կ'ուզեմ ըսել՝ ՚ի Միջագետս Հայոց և Ասորուց կ'ընդխաննին և մերթ՝ ՚ի Փոքր Հայս: Տիգրանակերտ, Արտագերք և Մծբին, զորս Վաշշակ, Սանատորուկ և Հոյկազն Տիգրան, ըստ բանից Խորենացոյց և Բուզանդաց և հօծեալ անմատչելի յարմարեցին», հանդերձ Զեկմայիս և Տիգրոնիւ. կ'ըլլան երկու պետութեանցն ևս ասպարէզք յաղթանակաց և պարտութեանց, և միանգամայն գերեզմանք անթիւ անկեցց և կործ անման:

Արգարէ ինչպէս Արևելեան պետութիւնը նախ քան զԱրաբացիս, զոր տեսանք, հիւսիսային և արևելեան ազգաց

Բ. 51:

4 Արքէղզոս, Բ. 11, էջ 136:

5 Վասն Հինուուած. Գ. 42. Ա:

Հետ մեծամեծ զոհեր ընելով քայլաւ-
յցտու, այսպէս ևս Արևմտեան կայ-
սրութիւնը կրնանք ըստել թէ գեռ իւր
կենաց վերջնական հարուածը շառած
՚ի Սպիտակ Հոնաց, արդէն յետ կոս-
տանդիանոսի Մեծի և Թէոդոսի՝ Ջա-
տած էր իւր զօրութիւնն Արքիկեցւոց,
Գթաց, վանտալաց և ամենէն աւե-
լի՛ Սասանեանց մեծազօր թագաւորաց
արշաւանքներովն, ըստ վկայութեան
Ֆորմանէոնի ¹:

Կոստանդիանոս ՚ի Բիւղանդիոն փո-
խադրելով իւր ամբուր, արդէն Երկու-
բաժնած էր Արևմտեան ինքնակալու-
թեան զօրութիւնը. և թէպէտ Արշա-
կունեաց թագաւորութեան պէս մէկ
բաժնին, կ'ուղեմ ըստել Հռովմայ մէջ տը-
կարայցած ժամանակ՝ դարձեալ միւս
բաժնին, այսինքն է Բիւղանդիոնի մէջ՝
կը դորդէր, սակայն առանց կերդրոնա-
ցման և անզօր կերպով. վասն զի այնու-
հետև վանիչ զօրութիւնն և կուսակցու-
թեան ոգին միշտ կը ճգտէին դժբախ-
տաբար եղծանելու զայն: Արևմտեան
կրկին գահակալութիւնն, որ Օգոստոսի
և Տրայիանոսի ժամանակ միապետա-
կան էր, պատկառանք և ան կ'աղջէր
բոլոր հարկատու և բարբարոս ժողովը-
դոց. յետ այնորիկ յերկուս բաժանեալ
ոչ այլ ինչ կ'աղջէր, բայց միայն փա-
փաքե հետաքրքրութիւն, արշաւելել յա-
ւարի առնուշ այն ծաղկած երկիրներն:
Հինաւորցն Հռովմայ զօրութիւնն՝ ա-
նոր սրովն և անպարտելի լեգէոններովը
միայն կը ճանչնային. իսկ ընդ հակա-
ռակն նորն Հռովմայ կամ Բիւղանդա-
կանին՝ անոր ամբաւ հարստութեամբ-
քը, զորս ամբարած էր և կ'ամբարէր
տակաւին երասխական և եփրատա-
կան հովտաց մէջ բնակող հայ ժողո-
վուրդներէն և ՚ի մեծափարթամ շա-
հաստանաց կողքիսի և փոքուն Հայոց:

Բայց աստի նոյն իսկ Արիանոսեանց,
կիասրիոսեանց և բոլոր արևելեան հե-
րետիկոսաց և հերձուածողաց կրօնա-
կան երկառակութիւնքը մտնալով և
տարբանալով Արևմտեան պետութեան

մէջ, բորբոքեցին քաղաքական և բարո-
յական երկպառակութեանց հրդեհներ
ամենուրեկ, որոնք միշտ պատրաստ
էին հրարվսային նիւթոց պէս, յերե-
րի և տատանեալ կացուցանել զայն:

Այսպէս ուրեմն կէս մը աւարառու-
թեան յուսով, կէս մ"ալ կոստանդիա-
նոսի յաջորդաց տկարութիւնն և ներ-
քին երկպառակութիւնքը պատեհ հա-
մարելով կ'ընթանան Սարմատացիք և
Սկիթացիք յԱրևմտուսու Վերջինները
զօրաւոր գանուելով, կը մղեն զգիթա-
-Սարմատացիք իրենց բնակութեանէն,
կը ստիպեն զՀռովմ' որ զանոնք ընդու-
նի, Քրիստոնեայ Հռովմ' կը բանայ ա-
նանց իւր հիւրընկալ ծոցը, բանալով
այնու իւր կործանեման անդունդը: Վա-
սն զի քիչ յետոյ կը դարձնեն անոնք
իրենց ապստամբութեան գէնքերն ի-
րենց բարերարող պետութեան վերայ:

Արևմտեան պետութեան նաւական
զօրութիւնն գեռ ուժով ըլլալով ծովա-
յին մուտքերը կը գոցէ անտեղիտալի
կերպով: Խսկ բարբարոսը ընդհակառա-
կըն զրւկ՝ ՚ի նաւական զօրութեանէ,
ցամաքային երկիրներն առհասարակ
կը ծածկեն բանակզք. այնպէս որ Ար-
շակունեաց թագաւորութեան անկմա-
նէն քիչ տարի վերջն զԱրևմտեան պե-
տութիւնը պաշարուած կը տեսնենք
յԱրևմտելու՝ ՚ի Պարսից և ՚ի Պարթեաց,
յարեւմուսու՝ ՚ի սլաւոնական կամ ՚ի
գերմանիկ ազգաց. հիւսիսէն՝ ՚ի Սար-
մատացոց, յԱլանաց և ՚ի Սկիթա-
ցոց: Ցուատինիանոսի փառաւոր յաղ-
թութիւնքը բաւական չեն ըլլար յետո-
սահաննելու այն ազգերն և հաստատե-
լու զՀռովմէական պետութիւնն. մա-
նաւանդ քանի որ նորանոր արշաւանք
և աղէտք պատերազմաց աստի, և ան-
տի բիւղանդական շուայլութիւնք ներս
սպրդելով, կը սպառեն զգանձս տէ-
րութեան զոր գանձեցին յաղթանակը
Սկիթիոնեանց, Փոմպէոսեանց, Դերմա-
նիկեանց, և այլոց զօրավարաց, յար-
գասարեր աշխարհէն Հայոց և այլոց
պարտեալ ժողովրդոց:

¹ Հա. Ա. Ք. ՃԶ.
ՊՐԱԿ Գ.

ի գուրք կը ջանան այնուհետև կայ. սերք Հոռվմայ վերստին գոցել այն անպատճարելի խրամատներն . վասն զի Դիտուկորիսի հետ նաև ամենայն շահաստանք փոքուն Հայոց ինկած էին, և յաւար մատնեալ՝ ի բարբարոսաց, յորս երբեմն ժամանակի, ինչպէս տեսանք, 300 այլատարք և այլալեզու ժողովրդոց հետ կը վաճառէին և կը շահէին Հոռվմայեցիք : Հուր տեղը կ'ակնկալէր այնուհետև Արևմտեան պետութիւնն իւր վերջին ճգնաժամին մէջ ընդունել՝ ի Հայոց՝ որպէս միշտն՝ զընտիր ընտիր գունդս աղեղնաւորաց և հեծելոց իւր թշնամեացը զէմ դնելու համար, զորս ընդունեցան երրեմն առ Երուանդաւ աւելի քան զ50,000, այն թագաւորին Մարաց և Պարսից դէմ արշաւած ժամանակն, և առ Արշակու երրորդին՝ ի ձեռն քաջին վասակայ: Որովհետև ոչ դաշանց հաստատութիւն մնացեր էր այն միջոցին և ոչ ալ Արշակունի թագաւորութիւն: Այլ իրեւ անոր կիսուինդան կմախ, մարդպանութիւն մը կար, և այն իսկ աւելի պարսից երկամէ ձեռքին տակն ընկճուած՝ քան աղատ:

Ուրեմն ուրիշ ճար չիկար Արևմտեան պետութեան: Երկաթապատ գաղանս այս, որ ըստ գանինիէթան կանխատեսութեան, կերաւ և մանրեց բոլոր Արևելեան պետութիւնն և զիտաւորութիւնն Հայոց, ինքն ևս ժամանակի եղած էր: Հասած էր անոր վախճանն. ահաւոր ուռան հարուած մը բաւական էր փշելու զայն: Ուստի նա կամայ կամ ակամայ պէտք էր որ համակամէր այնմ:

Եր իրօք հեռի չէր այս աստուածային հարուածը, կ'ողեմ բսել, Ատտիղաս, որ քիչ ատենէն պիտի ըլլար մահաբեր հարուած Արևմտեան տէրութեան: Արշակունեաց թագաւորութեան կործանելն 14 կամ 16 տարի հազիւ անցած էր, երբ նա անմիտ բազմութեամբ ծածկելով զհայաստան և տիրելով անոր, կը դողացընէ այնուհետև բոլոր Արևելից պետութիւնը: կ'ընթանայ ա-

ռանց ընդդիմութեան Սկ ծովին մինչեւ ցլինդրին ափունս: Հուրն և սուր են անոր արշաւանաց նշանները: Ադուփ-էլա քաղաքն, որ իտալից կամ Արևմտեան ինքնակալութեան նախապարհապէտ կը համարուէր, հանգոյն պարըսպաց երկրովիք կը կործանի ի հնչիւն փողոց և աղաղակաւ հիւսիսարնակ ազգին, այսինքն Սպիտակ Հոնաց: Մեղիոյան, կայսերանիստ քաղաքը՝ բոլորովին ի հուր կը դատի: Ոչ կայսր կը տեսնուի, ոչ ծերակցու և ոչ ալ հուով մէական լեռէսներ կ'երևին ուրեք, անոր ընթացքը խափանելու համար:

Վաղենտիխանոս Գ, Ռաւեննայ ապահնած է, և Արևմտեան պետութիւնն անոր հետ ի միասին սաստիկ ճգնաժամի մէջ է: Թէպէտ և Լևոն անմահանուն քահանայապետն յամին 452 կը խորտակէ պանչելապէս այն երկինասատ կայծակին բարկութիւնը, բայց շատ ուշ, և զրեթէ ի զուր: Վասն զի գոգցես բոլոր իտալիա, Գաղղիա, Թրակիա և ուրիշ շատ երկիրներ, արգէն իսկ աւերակօք և մոխրակուտով ծածկուած էին: Վաղենտիխանոսի մահուամբը՝ թէոգոսի Մեծի ցեղն անհետացած էր յամին 455 յԱրևմտուս, և այն պետութեան կործանումը՝ բուհճակներէն աւելի, վայրենաբարոյ ազգաց և ժողովրդոց խուժագուժ եղերերգութեանցը նիւթ դարձած: Անկարելի էր այնուհետև առասպելեալ փիւնիկի նման՝ իրական պայազատութիւնն մը և արքայութիւն յարուցանել անոր համայնածախ աճինէն:

Ոյսպիսի օրհասով մուրեմն բարձաւ նաև Արևմտեան կամ Հռովմէական պետութիւնն՝ յետ բարձման թագաւորութեան Արշակունեաց Հայաստանի: Սակայն մնաց պետութիւնն բիւզանդական. մնացին և Հայք, բարերարք և ձեւընտուք նոցա, և Պարսից՝ որոնց մասին հետեւեալ դլխուն մէջ պիտի խօսինք:

Կը հարունակուի:

Հ. Բարսեղ Սարգսոսուն